№ 235 ՇԱԲԱԹ, 24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 235

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ, 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 228.

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆ և իր զաւակները անհուն վշտով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, որ հանդուցեալ

ՏԻԿԻՆ ԴԱՐԻԱ ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

թաղումը տեղի կունենայ հոկտեմբերի 26-ին, երկուշաբթի օրը Վանքի Մայր եկեղեցու գաւթում, պատարագից յետոյ, որի սկիզբն է առաւօտեան ժամը 10½-ին։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԹԱՏՐՕՆՈՒՄ
Հայ դերասանական ընկերակցութիւնը Երկուշաբթի, հոկտեմբերի 26-ին, կը ներկայացնէ

I

ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ

Դրամա 5 գործ., Հ. Իբսէնի, թարգ. Ա. Թարխանեանի

Գրու Ալվինգի դերը կը կատարէ Ա. ՄԱՑՈՒՐԵԱՆ
Օսվալդի դերը կը կատարէ Պ. ԱԼԻԽԱՆԵԱՆ
Պաստոր Մանդերսի դերը կը կատարէ Պ. ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

II

ՅՕԲԵԼԵԱՆ

Վոդեվիլ, 1 գործ.

Մասնակցում են տ. տ. Գուլգեան, Մայսուրեան, Մելիքեան, պ. պ. Ալիխանեան, Հասան-Զայալեան, Ցարութիւնեան, Միրզոյեան, Մամիկոնեան և ուրիշներ։

Սկիզբն ուղիղ ժամը 8-ին

Ա.ԶԴ.—Պատրաստվում են ներկայացման համար՝ «Ա.ԶՐԱՑԵԼ», տրագի-կոմէդիա 4 գործ., Ս. Թառայեանի, «ՍԵՎԵՐՈՅ ՏՕՐԵԼԻ», տրագի-կոմէդիա 5 գործ., Ֆ. Կոպպէի, «ՆՈՐ ԿԵԱՆՔ», պիէս 4 գործ., Պոտապենկոյի։

Բեժիսեօր՝ տ. ՄԱՑՈՒՐԵԱՆ
(2-կ.) (առ.) 1127. 2—1

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԼՈՒԲ
Շաբաթ, հոկտ. 24-ին, երեկոյեան ժամը 8-ին տեղի կունենայ

ԵՐԵԿՈՅԹ

հետևեալ ծրագրով.
1) Ն. Մ. Սպիլիոտի կը կարդայ ըէֆերատ՝ «Ժամանակակից ֆէմինիզմի ծագումը» թեմայով։
2) Ըէֆերատի քննութիւնը։
3) Անդամների բնդհանուր ժողով՝ քննելու բեմ ունենալու հարցը, գրադարանից օգտվելու կանոնները և ընտրութիւն նոր անդամների։
4) Գրական-երաժշտական բաժանմունք՝ մասնակցութեամբ Օ. Վ. Մարցինկեվիչի և Ս. Գ. Բափանակեանի։
Մուտքը անդամների համար ձրի է, իսկ հիւրերը վճարում են 50 կոպ.։
(առ.) 1128. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Այսօր, շաբաթ, հոկտեմբերի 24-ին տեղի կունենայ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Երեկոյթին կը նուագեն սազանդարներ։
Ա.Զ.Դ.—Հետևեալ «Ընտանեկան Երեկոյթը» կիրակի, հոկտեմբերի 25-ին։
(առ.) 1125. 1—1

ՊՕՐՏՐԷՏԻՍՏ
ԼԻՕՆ
Ընդունում է մեծագիր պօրտրէտների պատուէրներ ամեն տեսակ լուսանկար պատկերներից։
ԳՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ
Հասցէն՝ Гановск. ул. № 7, Художественное портретное Ателье „Леонъ“.
Նոյն արուեստանոցում ընդունվում են աշակերտ-աշակերտուհիներ
ՍՈՎՈՐԵԼՈՒ ՐԻՏՈՒՇ
ձեռնտու պայմաններով։
(չ.շ.կ) (առ.) 1112. 3—2

Երդուեալ-հաւատարմատարի
օգնական
Ա.ղեքսանդր Պապովեանը
ՏԵՂԱՓՈԽՎԵՑ
Вельяминовская ул., № 30.
(ա. օ.) (առ.) 1121. 10—2

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին եւ վիրաբուժական (խերուրդ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.
Երևանեան հրապարակ—Գուշկինսկ. փ., № 1.
(ա. օ.) (առ.) 1045. 100—17

ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԾԸ

Թանգ նստեց Թիւրքահայերի վրա Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը։

Չափազանց թանգ։

Չափազանց մեծ զոհերով։

Եւ եթէ Թիւրքահայերը կարողանային նախատեսել այն ամենը, ինչ որ տեղի ունեցաւ այս վերջին երեսուն տարվայ ընթացքում, գուցէ ամենևին չը ցանկանային, որ գրված լինէր 61-րդ յօդուածը։

Թիւրքահայը արիւնաքամ և ուժասպառ եղաւ այդ յօդուածի պատճառով։

Պէտք է ենթադրել, որ աւելի փորձված, աւելի քաղաքագէտ ազգ այնպիսի վնասներ չէր ստանայ այդ յօդուածից, ինչպէս հայը ստացաւ շնորհիւ իր պարզամիտ հայեացքին քաղաքական եղելութիւնների և յարաբերութիւնների վրա։

Բայց հայ մարդը չափազանց շատ հաւատ ունեցաւ դէպի եւրօպական մեծ պետութիւնների միացեալ կամքը և ենթադրեց թէ այն, ինչ որ գրվեց Բերլինի դաշնագրի մէջ, դա մի այնքան վաւերական պատրաստ մուրհակ էր, որը կարելի էր գեղջել ամեն ժամանակ, երբ էլ ցանկանաս։ Հային թւեց, որ եթէ ցանկացած բոպէին նա պահանջի իրան խոստացվածը ուժեղ ձայնով, ամեն բան կը դրվի նրա առաջ, իբրև կատարումն այն հանրային հանդիսաւոր որոշման, որ գերազոյն հեղինակութեամբ յայտարարեց պետութիւնների վեհաժողովը Բերլինում։

Այդպէս պարզ և տրամաբանական էր կարծվում Թիւրքը դուրս գալու ազգայնաբոլորովին անհամապատասխան այն դառն և հոգեմաշ իրականութեան, որ բաժին ընկաւ հային։ Եւրօպան ցոյց չը տուեց իրան տրամադիր կամ յամենայն դէպս պատրաստ կատարելու իր խոստումը, և ապարդիւն մնացին անհաւասար ոյժերով և զէնքերով երկու կուող կողմեր՝ Թիւրքահայը և Թիւրքական հին բէժիմը։ Եւ որ աւելի սարսափելին էր Թիւրքահայի համար, այդ այն էր, որ հին բէժիմին բարոյական աջակցութիւն էր ցոյց տալիս պետութիւնների մի մասը։ Այլ ևս ի՞նչ յոյս կարելի էր ունենալ հայի յաղթանակի վրա։

Թիւրքահայը ջարդվեց և ընկճվեց։

Մի փոքրիկ ազգ, որ առանց այն էլ սակաւաթիւ էր, կորցրեց 100,000-աւոր զաւակներ, մնանկացաւ ամենասպէս և յետ մղվեց կուլտուրական առաջխաղացութեան շարժումից մի քանի տասնեակ տարիներով։

Այո՛, թանգ և շատ թանգ նստեց հայի վրա 61-րդ յօդուածը։ Կամ աւելի ուղիղն ասած՝ շատ թանգ նստեցրին նրա վրա այդ յօդուածը, որ կոչված էր նոր կեանք և նոր ոգի տալու նրան։

Բերլինի դաշնագրի այդ յօդուածը մինչև այժմ չէ իրագործվել։ Եւ եթէ մի փոքր մեղմութիւն մտել է Թիւրքիայի դաժան իրականութեան պայմանների մէջ, դա օսմանեան նոր սահմանադրութեան օրով առաջ եկած մասնակի բարեփոխութիւնն է։

Անշուշտ, եթէ Թիւրքիայի նոր կառավարութեանը աջողվի իրապէս ստեղծել լայն սահմանադրական կեանք պետութեան մէջ, իրագործել ազատութիւնները, երաշխաւորել ժողովրդի մասաւոր և անտեսական ազատ զարգացումը և հնարաւորութիւն տալ իր քաղաքացիներին հաստատելու կուլտուրական համերաշխ գործունէութեան համակենցաղ, այն ժամանակ այլ ևս ի՞նչ կը մնայ 61-րդ յօդուածից։ Համարեա ոչինչ։

Բայց մենք ասացինք՝ «եթէ»։

Դա պայմանաւոր դրութիւն է։ Դա կարելիութեան և հաւանականութեան մի ենթադրութիւն է։ Աւելի ոչինչ առ այժմ։

Կարող է այդպէս լինել։ Եւ կան մարդիկ, որոնք այդ կարելիութեան վատահ յոյսով՝ պատրաստ են ջնջել 61-րդ յօդուածը։

Սակայն ի՞նչ հաստատ երաշխաւորութիւններ կան այդպիսի հաւատիա[illegible] Թիւրքական սահմանադրութիւնը լայն ըմբռնումներ է ցոյց տալիս իր պետութեան մէջ ապրող ազգութիւնների իրաւունքների վերաբերմամբ։ Եւ արդեօք ներկայ սահմանադրութիւնն իրագործելի է այն, ինչ որ թելադրում է 61-րդ յօդուածը։ Ո՞վ կարող է երաշխաւոր լինել, որ վաղը սահմանադրական շարքերում չեն ուժեղանայ յետադարձ, բէակցիօնական ոյժերը և իրապէս չեն վերահաստատի դժնդակ պայմաններ ազգութիւնների կեանքի համար։ Մենք չենք խօսում աւելի ծայրայեղ դէպքերի մասին։

Ոչ։ Չը պէտք է ջնջվի ներկայումս 61-րդ յօդուածը։

Նրա վերացնելու ժամանակը չէ եկել։ Թիւրքական իրականութիւնը դեռ հաստատ երաշխաւորութիւն չէ ներկայացնում Թիւրքահայ ժողովրդի ապահովութեան համար, որպէսզի եւրօպական ապահովութեան այդ փոքրիկ դրաւականն էլ դէն շպրտվի։

Եթէ 61-րորդ յօդուածը չափազանց թանգ նստեց հայի վրա, գոնէ այդ թանգ գնով և անբաւ զոհերով մարտիրոսացած վաւերաթուղթը թող այսուհետև կատարի մի որևէ դրական դեր այն ժողովրդի համար, որի համար նա գրված էր։

Նա մինչև այժմ էլ դեռ որոշ սպառնալիք է Թիւրք վարչութեան համար. նա որոշ հանգամանքներում կարող է այժմ ներկայացնել։

Ինչո՞ւ են Թիւրք վարչականները այդքան հետամուտ ոչնչացնելու և դէն շպրտելու 61-րդ յօդուածը։

Անկեղծ ազատարար ոգու տէր Թիւրք վարչականին չը պէտք է 61-րդ յօդուածը որևէ վրդովմունք պատճառի, որովհետև այդ յօդուածը պահանջում է բարեփոխութիւններ և բարեկարգութիւններ, այսինքն այն, ինչ որ ինքն է ցանկանում իրագործել իր պետութեան մէջ։ Կասենք աւելին՝ նրա համար նոյն իսկ նպաստաւոր պէտք է լինի այդ յօդուածի գոյութիւնը, որովհետև նա այդ յօդուածի սպառնալիքով կարող է համոզել պահպանողական օսմանցիին՝ մացնելու բարենորոգումներ, որպէսզի վերացված լինի եւրօպական միջամտութեան հնարաւորութիւնը։

Անկեղծ ազատասէր Թիւրք քաղաքացին չը պէտք է այդքան հետամուտ լինի ջնջելու այդ յօդուածը և միայն ու միայն աշխատի հաստատելու այնպիսի ամուր և անսասան բարեկարգութիւններ, որ [illegible] հումներն և արտօնութիւնները, նրանց թւում և 61-րդ յօդուածը, դառնան բնականօրէն աւելորդ։

Դա է ուղիղ ճանապարհը։

Ա. Քալանթար

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Վերջերս Կ. Պոլսի մամուլը, ինչպէս յայտնի է, շատ է զբաղված պատրիարքական արտօնութիւնները ջնջելու հարցով։ Այդ առիթով Կ. Պոլսի «La Turquie» լրագրի աշխատակիցներից մէկը խօսեց յունաց տիեզերական պատրիարքի հետ, որը հետևեալ յայտարարութիւնն արեց այդ առարկայի վերաբերմամբ։

«Ոչ մի կասկած չը կայ,—ասաց պատ-

նուսում դասակարգին հաղորդել, վերջ տալ ջարդերու և աւարութեան։ Հաղորդակցութեան պակասը կը կասեցնէ կեդրոնական իշխանութեան մեքենան։ Կը ժանգոտին իրար մէջ մեծ ու փոքր հեռաւոր անիւները՝ միևնոյն ուժէն շրջած, այլ տարբեր պաշտօն կատարող, ամենքն ալ միևնոյն նպատակին ծառայող՝ յաջողաբար, ատիճանաբար։ Բանի որ երրորդ յօդուածը կասկածն ու յոռի զրոյցները ջրեց, ուրեմն պատճառ չկայ այլևս հայը՝ Կավալա և յոյնը՝ Մալաթիա պաշտօնով ղրկելու։ Ամեն ազգութիւն՝ որքան ալ որ բաղադրիչ օսմանցիութեան՝ իրեն ընտրող կեդրոնը ունի, ինքնուրոյն պարծանքը։ Մի մեղադրեք յոյնը, եթէ իր խանձարուրը հառաչէ։ Զաւակ մը իր հօրենական դաշտը կը շարունակէ մշակել. եղբայր մը իր եղբօր օրինակին հետևելով կը գործէ, կը շէնցնէ։

Կառակագիրները այս բնազդին փաստեր են. մարդ՝ Հնդկաստանէն իր հայրենի օջախին կը խորհի, որքան անկէ կը հեռանայ՝ այնքան մօտ կը զգայ։ Այս զգացումը աւելի խոր տոգորուած է հայուն սրտին մէջ, քանի որ վաճառականութեան, շահու աղբիւրը զինքը կը մղէն հեռու երկիրներ։ Թերևս Թիւրքը չըմբռնէ այս սուրբ սէրը, քանի որ նա պատերազմով զբաղած է և կեանքը մշատաև տեղափոխութիւն մը եղած է։ Բաբելոնի ժամանակ իսկ հայը իր լաստափայտով գետերու հոսանքը կիջնէր, կը ծախէր իր ապրանքը և կը վերադառնար իր հայրենիքը։ Դարերով մշակուած և արմատացած զգացումը կարելի չէ արմատախիլ ընել մեր սրտերէն. ոչ միայն դժուար, այլ արդար ալ չէ։ Ուստի չենք գիտեր ինչ հիման վրայ պիտի հաստատուին նահանգաց իրաւանց ընդարձակման կամուրջները, որոնք պիտի կապեն և բարդաւաճեն մեր լեռնակոշտ ձորահովիտները և դարափոսները։

Թիւրք կօմիթէին ամենակարողութեան ալ տարակոյս չկայ։ Այն թելադրող ազդեցութիւնը, այն հսկողութեան դերը, որ, իբրև պարտականութիւն ընդունած, կը կանգնէ և կը տապալէ վարչապետն ու մինիստր մը, այս չորրորդ յօդուածին իրականութեան առթիւ նաև պիտի ծաւալէ իր գերազդեցիկ կարողութիւնը նոյն արագութեամբ՝ որ Պօլիսը ռէակսիոնէն փրկեց, նոյն անաչառութեամբ՝ որքան պատերազմական ատեանները կը դատապարտեն, որոնց վճիռներուն Հիլմի փաշան իսկ անկարող կը մնայ դպչելու։

Այս հարցը բնական է, քանի որ կեդրոնական դիւանին ազդը ծնունդ մըն է երկու կուսակցութեանց համախոհութեան՝ մին ամբողջ Թիւրք ժողովուրդը ներկայացնող, միւսը՝ հայութեան մի փոքր հատուածը։

Քանի որ հայ պատրիարքարանը ազգութեան մարմնացումն է և արդի դահլիճը՝ նոր-Թիւրքերու կօմիթէին արտաբուրումը, պատշաճագոյն չէր մնիթ, որ այս երկու ներկայացուցիչ մարմինները համերաշխութեան 5 յօդուածները կնքէին։ Քանզի երկու կօմիթէներուն պարագաները շատ կը տարբերին։

Ինչ որ Իթթիհադ-Թէրաքքը ծրագրէ, կնքէ, դահլիճին և խորհրդարանի մեծամասնութեան հաւանութիւնը կը հաստատէ։ Արդ՝ դաշնակցականը ունէին այն գերընտիր կարողութիւնը և իրաւասութիւնը ինքնաձեռն վիճածն ու կնքածը պատրիարքարանին՝ այսինքն հայ ազգին իբր պատգամ տալու։

Դէպքերը այսպիսի իրողութիւն մը ցոյց չեն տար. նոյնիսկ հակառակը։

Մինչ Իթթիհադ-Թերաքքը և դաշնակցականը ընդհանուր ձուլում, միասիրտ հաստատակամ ընթացք, ընդհանուր գործունէութիւն կը պայմանագրեն, անդին երկու ժողովուրդին ներկայացուցիչ վարիչները սիջաղէպով կը տաղնապին։ Պատրիարքը թաքրիր կուտայ, կը հրաժարի։ Վարչապետը կը պնդէ, չընդունիր։

Որքան նախորդներուն մէջ հաստատապինդ համերաշխութիւն, վերջինները՝ անհամաձայն։

Այսինքն՝ Թիւրքիայութիւնը կը շարունակէ հայ ազգին և ընդմէջ վարչապետին, որ է Իթթիհադ, որ է խորհրդարանին մեծամասնութիւնը, ամբողջ իսլամութիւնը, ինչուան անգամ վեհապետին հաւատումները։

Ի՞նչպէս կրնանք հաշտեցնել այս անսովոր կացութիւնը, ուր պատրիարք մը հարկադրուած կը հրաժարի, մինիստր մը ազգայնամոլութեան հարուածին ենթակայ, որու դէմ նոյնիսկ Իթթիհադի գլխաւորները կը կանգնին իրենց հանրմեներով։

Համիդեան ժամանակ հայու դէմ միայն երիկ-մարդիկ կը գտնուէին, հիմա կիներն ալ նոյն զգացումով վառուած՝ թատերաբեմին վրայ երևան կուգան։

Ադանայի մէջ հայ այրի կին մը, դրացի տունէն մայա ուզած ատեն իր դժբաղդ վիճակին վրայ լալուն պատճառով, քիչ մը նաց որ հեղձամահ պատժուէր։

Արդի միջադէպին տեսարանն իսկ եղան է։ Կը տեսնենք հայ մինիստրին հակառակ կուսակցութեան մէջ հայ հերոսներ, ազգաբերներ, որոնք միևնոյն ժամանակ ի նպաստ հայութեան պաշտօնական 5 յօդուածները կը ստորագրեն։

Հակասութիւն մը կայ, ըսինք, մեղի համար դժուարակնճիռ։ Ապագան, մօտ ժամանակի մէջ, պիտի ստուգէ անշուշտ, թէ որ ընազդը հայ հատուած մը այս քայլին առաջնորդեց և թէ ի՞նչ կը նշանակէ Իթթիհադի մերձեցումը մեր դաշնակցականներուն։

Առանց յոռետեսութեան մէջ թաղուելու, պիտի փափաքէինք, նահանգային իրաւանց ընդարձակումին հետ, եթէ չըսենք առաջ, ոստանին բարեձևութեան սկզբնաւորութիւն մը գոնէ ստուգուէր։ Գուցէ եկաւ՝ գնաց. ինչ տպաւորութիւն ունեցաւ մեր վրան, կանգիտանամ։ Այսօր կամուրջ, անդրվոսփորեան կամուրջ և մեծաշնորհներ կը ծեծուին, մինչ թաղաքեստութեան նախագոյն գործը պէտք է որ ըլլար վերջնական ընդհանուր յատակագծի մը պատրաստութիւնը, որպէսզի ամեն կալուածատէր իր շահերուն հետապնդի, հրապարակը շարժի։ Արդի վիճակով, հին յատակաձևով և պատերազմական ատեանին գործելու պահուն, ամեն մարդ ձեռնպահ կը մնայ. ոչ մի կարևոր ձեռնարկ թռիչ կառնէ։ Օսմանցիք կը սպասեն, ինչպէս պիտի սպասեն այս չորրորդ յօդուածին ծնած ակնկալութիւնները և բարիքը, որ մեր արդի պայմաններուն մէջ շատ տարակուսական կը մնան։

Եթէ սիրտը չդործէ, մարմինը ինչպէս կապաքինի։

Լ. Կ.

(Վերջը միւս անգամ)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱԼՈՑԸ

Ե. *)

4. Les deux comités declarent qu'ils sont d'accord sur le point que l'extension du pouvoir provincial est un garant du progrès et de l'unité de la patrie commune ottomane.

Չորրորդ յօդուածին սկզբունքը ցոյց կուտայ գերիշխող Թիւրք կարծիքին վիճողութիւնը՝ ընդհանուր բարեկարգութեան առաջնորդող կարճ ճամբուն հետևելու հաճութեամբ։ Նահանգային իրաւանց ընդարձակման խնդրոյն պատճառով ազատականք պախարակուելով՝ խորհրդարանին դռները Սաբահէդդինի գաղափարակիցներու երեսն ի վեր գոցուեցան։

Ապակեդրոնացումը կառավարելու դիւրութիւնն է, բազմացեղ և լայնատարած պետութեանց պատշաճ։ Անգլիոյ թագաւորն իսկ իր տիտղոսը ապակեդրոնացուցած է. նա ևս ունի իր դեր-արքաները. քա՛ւ լիցի. մենք ատոր չենք փափագիր, այլ միայն մասակարարական և վերատեսչական ծանրաբեռն պարականութեան ստորաբաժանումը։ Մարդ՝ Արևազդայ ուշիմութիւն իսկ ունենայ, մեր արդի վիճակով՝ չի կրնար բնաւ մէկ ակնարկով ընդգրկել և անտեսել Անատոլիի անապատ անջրպտները, հովիտները և լեռնադաշտերը, ուսումնասիրել տեղական պահանջը, ջնջել դէրեբէյութեան դրութիւնը, կրկին հարկաւորութիւնը, համերաշխութեան հոգին այդ ա-

*) Տես «Մշակ» № 234.

ինքնաձեռն վիճածն ու կնքածը պատրիարքարանին՝ այսինքն հայ ազգին իբր պատգամ տալու։

Դէպքերը այսպիսի իրողութիւն մը ցոյց չեն տար. նոյնիսկ հակառակը։

Մինչ Իթթիհադ-Թերաքքը և դաշնակցականը ընդհանուր ձուլում, միասիրտ հաստատակամ ընթացք, ընդհանուր գործունէութիւն կը պայմանագրեն, անդին երկու ժողովուրդին ներկայացուցիչ վարիչները սիջաղէպով կը տաղնապին։ Պատրիարքը թաքրիր կուտայ, կը հրաժարի։ Վարչապետը կը պնդէ, չընդունիր։

Որքան նախորդներուն մէջ հաստատապինդ համերաշխութիւն, վերջինները՝ անհամաձայն։

Այսինքն՝ Թիւրքիայութիւնը կը շարունակէ հայ ազգին և ընդմէջ վարչապետին, որ է Իթթիհադ, որ է խորհրդարանին մեծամասնութիւնը, ամբողջ իսլամութիւնը, ինչուան անգամ վեհապետին հաւատումները։

Ի՞նչպէս կրնանք հաշտեցնել այս անսովոր կացութիւնը, ուր պատրիարք մը հարկադրուած կը հրաժարի, մինիստր մը ազգայնամոլութեան հարուածին ենթակայ, որու դէմ նոյնիսկ Իթթիհադի գլխաւորները կը կանգնին իրենց հանրմեներով։

Համիդեան ժամանակ հայու դէմ միայն երիկ-մարդիկ կը գտնուէին, հիմա կիներն ալ նոյն զգացումով վառուած՝ թատերաբեմին վրայ երևան կուգան։

Ադանայի մէջ հայ այրի կին մը, դրացի տունէն մայա ուզած ատեն իր դժբաղդ վիճակին վրայ լալուն պատճառով, քիչ մը նաց որ հեղձամահ պատժուէր։

Արդի միջադէպին տեսարանն իսկ եղան է։ Կը տեսնենք հայ մինիստրին հակառակ կուսակցութեան մէջ հայ հերոսներ, ազգաբերներ, որոնք միևնոյն ժամանակ ի նպաստ հայութեան պաշտօնական 5 յօդուածները կը ստորագրեն։

Հակասութիւն մը կայ, ըսինք, մեղի համար դժուարակնճիռ։ Ապագան, մօտ ժամանակի մէջ, պիտի ստուգէ անշուշտ, թէ որ ընազդը հայ հատուած մը այս քայլին առաջնորդեց և թէ ի՞նչ կը նշանակէ Իթթիհադի մերձեցումը մեր դաշնակցականներուն։

Առանց յոռետեսութեան մէջ թաղուելու, պիտի փափաքէինք, նահանգային իրաւանց ընդարձակումին հետ, եթէ չըսենք առաջ, ոստանին բարեձևութեան սկզբնաւորութիւն մը գոնէ ստուգուէր։ Գուցէ եկաւ՝ գնաց. ինչ տպաւորութիւն ունեցաւ մեր վրան, կանգիտանամ։ Այսօր կամուրջ, անդրվոսփորեան կամուրջ և մեծաշնորհներ կը ծեծուին, մինչ թաղաքեստութեան նախագոյն գործը պէտք է որ ըլլար վերջնական ընդհանուր յատակագծի մը պատրաստութիւնը, որպէսզի ամեն կալուածատէր իր շահերուն հետապնդի, հրապարակը շարժի։ Արդի վիճակով, հին յատակաձևով և պատերազմական ատեանին գործելու պահուն, ամեն մարդ ձեռնպահ կը մնայ. ոչ մի կարևոր ձեռնարկ թռիչ կառնէ։ Օսմանցիք կը սպասեն, ինչպէս պիտի սպասեն այս չորրորդ յօդուածին ծնած ակնկալութիւնները և բարիքը, որ մեր արդի պայմաններուն մէջ շատ տարակուսական կը մնան։

Եթէ սիրտը չդործէ, մարմինը ինչպէս կապաքինի։

Լ. Կ.

(Վերջը միւս անգամ)

բիարքը,—որ այժմեան Թիւրքաց կառավարութիւնը ջերմ ցանկութիւն ունի ոչնչացնել մեր արտօնութիւնները։ Այդ բանը պարզ երևում է իշխող երիտասարդ-Թիւրքերի կուսակցութեան ընթացքից և գործողութիւններից։ Ինչպէս երևում է, մի քանի երիտասարդ-Թիւրքեր, որոնք որպէս ուսանողներ կամ փախստականներ երկար ժամանակ ապրել են Ֆրանսիայում, ցանկանում են այստեղ և գործադրել եկեղեցին պետութիւնից անջատելու սկզբունքը։ Նրանք ցանկանում են, որ պատրիարքը միայն հոգևոր գլուխ լինի և նրա ազդեցութիւնը չը տարածվի եկեղեցուց այն կողմը։ Իր անձնական և քաղաքական պահանջների համար ազգաբնակութիւնը պէտք է դիմի իր պատգամաւորներին, որոնք կը միջնորդեն պարլամենտի և կառավարութեան առաջ։ Մի խօսքով երիտասարդ-Թիւրքերը, գիտենալով այն հնչին ազդեցութիւնը, որ կարող է ունենալ քրիստոնեայ պատգամաւորների խումբը կառավարական մեծամասնութեան վրա, կամենում են անջատել քրիստոնեայ ժողովուրդները իրանց այն բնական կենտրոններից, որ ներկայացնում են պատրիարքարանները, որպէսզի հնարաւորութիւն ունենան ջախջախել նրանց ազգայնական ոյժը։ Ֆրանսիայում եկեղեցին անջատվեց պետութիւնից, սակայն ֆրանսիական կառավարութիւնը սկսեց հենց կրօնից, որը մինչև այդ ժամանակ պետական էր։ Մենք կամաւորապէս կը հրաժարվէինք մեր արտօնութիւններից, եթէ մեզ մօտ ևս վարվէին այնպէս, որպէս Ֆրանսիայում։ Պէտք է ոչնչել նախ և առաջ Թիւրքիայում տիրապետող կրօնից՝ իսլամութիւնից։ Կառավարութիւնը պէտք է խլէ քաղաքական իրաւունքները շէյխ-ուլ-իսլամից, որը սրանից յետոյ չը պէտք է մասնակցէ մինիստրական պարտաւորութիւններ կատարելով իր հօտի մէջ։ Օսմանեան պետութիւնը պէտք է կատարելապէս անկախ լինի մահմեդական կրօնից, որը պէտք է հաւասարեցնել երկրում գոյութիւն ունեցող ուրիշ կրօնների հետ։ Միևնոյն ժամանակ վեհապետն ևս չը պէտք է լինի և խալիֆ։ Շատ տարօրինակ է, յիրաւի, երբ սուլթան-խալիֆի կառավարութիւնը մտածում է եկեղեցին պետութիւնից անջատելու մասին։ Մինչև որ Թիւրքերը չիրացնեն ֆրանսիական սկզբունքները եկեղեցին պետութիւնից անջատելու հարցի վերաբերմամբ, մենք չենք հրաժարվի մեր արտօնութիւններից։ Այլապէս կը ստացվի սարսափելի անհաւասարութիւն մէկ կողմից Թիւրքերի որոնց կրօնապետը կը պահպանէ իր քաղաքական բնաւորութիւնը, իսկ միւս կողմից քրիստոնեաների միջև, որոնց կրօնապետները զրկված կը լինեն քաղաքական իրաւունքներից։ Այդ դէպքում ոչ մի սահմանադրական հաւասարութիւն չէ լինելու և հանդիսաւոր ֆրազները, թէ՝ «բոլոր օսմանցիները, առանց դաւանութեան և ազգութեան խորութեան, հաւասար են օրէնքի առաջ», ոչ այլ ինչ են, եթէ ոչ անմտութիւն և ստութիւն։ Եթէ ցանկանում են տիրապետող ցեղ լինել ի վնաս ուրիշ ազգութիւնների, այն ժամանակ չը պէտք է խօսել հաւասարութեան և արդարութեան մասին։ Ոչ միայն քաղաքագիտական չէ, այլ և վտանգաւոր է մինչև անգամ մտածել Թիւրքիայում ապրող զանազան ժողովուրդների արտօնութիւնները ոչնչացնելու մասին։ Այնպէս հեշտ չէ ընկել պատրիարքարանի արտօնութիւնները, որպէս ոմանք կարծում են։ Մեր հօտի հետ միասին մենք կը պաշտպանենք մեր արտօնութիւնները մինչև մահը։

«Զինուորագրութեան մասին ևս թակրիր մատուցի, որի մէջ պահանջում եմ, որ քրիստոնեաները առանձին զօրաբաժիններ կազմեն իրանց քահանաներով, որոնք կը կատարեն իրանց կրօնական պարտաւորութիւնները։ Սակայն, զինուորագրութիւնը քրիստոնեաների համար դեռ ևս օրինականացված չէ, թէպէտ և մամուլի մէջ շատ են խօսում դրա մասին։ Այդ հարցը նորից կը յետաձգվի։

«Ինչ վերաբերում է դպրոցներին, ես ամենևին չեմ թոյլ տայ այնտեղ կառավարական կօնտրօլ, որովհետև ես պատասխանատու անձն եմ նրանց համար կառավարութեան առաջ։ Մենք կը պաշտպանենք մեր պատմական իրաւունքները,—վերջացրեց իր խօսքը պարիրքը,—բոլորի և իւրաքանչիւրի դէմ»։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Պետերբուրգ, 22 հոկտեմբերի

Արդաբիլից ստացված վերջին տեղեկութիւնների համաձայն, տեղական նահանգապետը, անկումների անդամները և հոգևորականութիւնը ապաստանել են ռուսական փոխ-հիւպատոսարանում։ Դրանից յետոյ շահսէվանները և դարաղացիները գրաւել են քաղաքը։ Բոլոր բազարները, քարվանսարաները և տների մեծ մասը քարուքանդ են արված։ Շահսէվանները փոխ-հիւպատոսից պահանջել են յանձնել իր մօտ բաստ նստած մարդկանց։ Երկիւղ կայ, որ հիւպատոսարանը կարող է ենթարկվել թափառականների յարձակմանը։ Հիւպատոսական պահակախումբը մի հարիւրեակ կօզակներով չէ կարողացել յարձակվողների առաջն առնել։

Ի նկատի ունենալով վերոյիշեալ հանգամանքները, Արդաբիլ են ուղարկվում, բացի արդէն հիւպատոսական պահակախումբը ուժեղացնելու ուղարկված մի հետևակ բատալիոնից, կրկին երկու հարիւրեակ կօզակներ՝ երկու թնդանօթներով և սապէօրներ, դարձեալ բաւական ուժեղ զօրամաս, որպէսզի հարկաւորութեան դէպքում վճռական գործողութիւնների ձեռնարկվի վաչկատուն ցեղերի դէմ։ (Հ. Գ.)

—

Թաւրիզ, 22 հոկտեմբերի

Երէկ վերադարձաւ Արդաբիլից փախած Սաթթար խանը։ Զը նայած նրա առաքման լիակատար անաջողութեան, նրան ցոյց տուին հանդիսաւոր ընդունելութիւն։

Թաւրիզեցի յեղափոխական Սէյիդ Հուսէյն խանը ձերբակալվեց մի յօդուածի համար, որի մէջ առաջարկում է Թիւրք կանանց՝ երեսները չը ծածկել։ (Հ. Գ.)

—

Թաւրիզ, 22 հոկտեմբերի

Թէհրան գնացած Թաւրիզի պատգամաւորներին փոխարինեցին գեներալ-նահանգապետից նշանակված անձինք. ընտրութիւնները չը կայացան պատուիրակների բացակայութեան պատճառով։ (Հ. Գ.)

—

Թաւրիզ, 22 հոկտեմբերի

Տեղումս ստացված տեղեկութիւնների համաձայն, Բահիմ խանը շահսէվանների հետ յարձակվել է Արդաբիլի վրա և քարուքանդ արել բազարները, քարվանսարաները և տների մեծ մասը։ Նահանգապետը, անկումները և հոգևորականութիւնը թաղնվել են ռուսական փոխ հիւպատոսարանի մէջ։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Լիվադիա, 22 հոկտեմբերի

Կայսերական Պալատի մինիստրի հեռագիրը». «Այսօր Բարձրագոյն թոյլատուութեամբ զօրահանդէս կատարվեց Գահաժառանգի անուան գնդի հարիւրամեակի առիթով։ Թագաւոր Կայսրը դիմեց գնդին մի ճառով, որը ընդունվեց անվերջ ուռռաներով։ Ապա տեղի ունեցաւ նախաճաշ։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 22 հոկտեմբերի

Հարցապնդումների դումայական մասնաժողովը, լսելով գեկուցում սօցիալ-դեմօկրատական Ֆրակցիայի՝ հիմնական օրէնքների 96-րդ յօդուածի գործադրութեան մասին ուղղած հարցապնդման մասին, 11 ձայնով ընդդէմ 8-ի գտաւ, որ հարցապնդումը հիմք չունի։ (Հ. Գ.)

—

Ադդիս-Աբեբա, 22 հոկտեմբերի

Մենելիքի առողջական դրութեան մէջ երէկ նկատվեց մի փոքր բարելաւում, բայց յանկարծակի մահը անխուսափելի է։ Կառավարութիւնը վաղօրօք միջոցներ է ձեռք առել պահպանելու կարգ ու կանոնը։ Նէգուսի մանիֆէստը գահաժառանգի մասին երկրում ընդունվեց հանդստութեամբ։ (Հ. Գ.)

—

Աթէնք, 22 հոկտեմբերի

Տիպալդոսը և նրա ընկերակիցները ձերբակալվեցին կէս-գիշերին Կաֆաղիայի ճանապարհին։ Բոլորը հագել էին քաղաքացու զգեստներ. ընդդիմադրութիւն ցոյց չը տուին, սակայն Տիպալդոսի ընկերները փորձեցին փախչել, բայց կանգ առան, երբ նրանց վրա սկսեցին կրակել։ Տիպալդոսը մըտադիր է ներկայանալ իշխանութիւններին, որպէսզի արդարացնէ իր գործելակերպը։ (Հ. Գ)

—

Վիեննա, 22 հոկտեմբերի

Սլաւօնական պարլամենտական միութիւնը յայտնեց, որ հրաժարվում է բանակցութիւններ վարելուց կառավարութեան հետ նրա այժմեան կազմի օրօք և կաջակցէ ճգնաժամի լուծման գործում սոսկ այն կառավարութեան, որպիսին կերաշխաւորէ փոխել սիստեմը՝ դէպի բոլոր ազգութիւնները արդարացի վերաբերմունք ցոյց տալու մտքով։ (Հ. Գ.)

—

Պրագա, 22 հոկտեմբերի

Բէյքարաան, սէյմի և աւագների պալատի բոլոր անդամների ժողովը որոշեց մի կոչ հրատարակել, որով բողոքել գերմանական երկիրներում լեզուների օրէնքներ մտցնելու դէմ։ Կոչի մէջ անկախութիւն է յայտնված կառավարութեանը և կոչ է յայտարարված նրա դէմ։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 22 հոկտեմբերի

Դաւանաբանական հարցերով զբաղվող ժամանաժողովը առաջին հերթին դրեց այլադաւանների կրօնական ընկերութիւնների օրինագիծը. գեկուցանելու է Լվովը։

Երէկ տեղի ունեցան մի շարք խուզարկութիւններ և ձերբակալութիւններ. ձերբակալվեց յայտնի յեղափոխական Զայչօվսկին, որ վերջերս ազատվել էր Պետրոպավլովսկի բանտից անգլիացիների տուած 50,000 ռուբլի գրաւականով։ («Баку»)

—

Պետերբուրգ, 21 հոկտեմբերի

Պետական Դումայում նկատվում են անհանդիստ արամադրութեան սիմպտոմներ. տոկուն և կայուն կենտրոնի բացակայութիւնը կառավարութիւնը հատարում է վանդաւոր Պետական Դումայի յետագայ նորմալ գոյութեան համար։

Տեղի ունեցաւ խօսակցութիւն Գուչկովի և մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինի միջև 96-դ յօդուածի առիթով ուղղված հարցապնդման մասին։ Զեկուցանող Շուբինսկին պնդելու է հարցապնդումը մերժելու վրա։ Ստոլիպինը, լուրերին նայած, հանդէս է գալու 96-դ յօդուածի առիթով մի մեծ ծրագրային ճառով։

Ծօմեակովը տեղեկացրել է, որ կառավարութիւնը պատրաստ է բացատրութիւններ տալ Պետական Դումային «ռուս ժողովրդի միութեան» մասին արված հարցապնդման առիթով։

Ոստիկանութեան վերակազմութեան օրինագիծը կը ներկայացվի Պետական Դումային մինչև ծննդեան արձակուրդները։

Պուշկինեան 1000 ռուբլի մրցանակը գիտութեանց ճեմարանը յատկացրեց գրող Կուպրինին։

Օդեսայում պարսից նախկին շահը և գլխաւոր ներքինին հիւանդացել են տենդով և անկողին են ընկել. հնարաւոր է, որ Մահմեդ-Ալին կը տեղափոխվի Ղրիմ։ («Б.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՄՈՅԵԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ

—

Հոկտ. 18-ին, կիրակի օր, Քամոյեան եկեղեցում 48 ծխականների ներկայութեամբ բացվեց ծխ. ընդհ. ժողովի նիստը, որ բժ. Աղասարեանի նախագահութեամբ զբաղվեց օրակարգի այն խնդրով, թէ ինչ յարաբերութեան մէջ են լինելու հոգաբարձութիւնն ու եկեղեցու շինարարական յանձնաժողովը։

Ժողովը խիստ ազմկալից էր։

Սկզբում ժողովականները հարց դրին, թէ ծխական ժողովը ինչ օրէնքներով, կանոններով է ղեկավարվելու։

Ժողովականների և գործակալ քահանայի տուած բացատրութիւններից յետոյ, միաձայն վճռվեց ղեկավարվել միմիայն 1905 թ. Փոխարքայի ժամանակաւոր և Կաթողիկոսի 1907 թ. հրատարակած կանոններով։

Սրանից յետոյ ժողովը անցաւ օրակարգի խնդրին։

Վիճաբանութեան ընթացքում պարզվեց, որ շին. յանձնաժողովը սկզբում (ինը տարի առաջ) բաղկացած է եղել 11 հոգուց, ապա 5, իսկ վերջերս էլ de facto 3 հոգի են մնացել, որոնցից 2-ը հոգաբարձութեան անդամ են եղել։

Ժողովը, նկատելով որ շին. յանձնաժողովը ինքնին կազմալուծվել է և որ եկեղեցու շինութիւնը վերջանալու վրա է, երկար թեր ու դէմ վիճելուց և հոգաբարձութեան ու շինարարական յանձնաժողովի մի անդամի բացատրութիւնները լսելուց յետոյ, քուէարկութեան դրեց Աթանասեանի, Խաժակի, Յ. Տէր-Միրաքեանի կողմից առաջարկված հետևեալ բանաձևը. «Ծխական ժողովը, լսելով հոգաբարձութեան և շինարարական յանձնաժողովի մնացած անդամների բացատրութիւնները, որոշեց՝ համաձայն ծխական կանոնադրութեան ճիշդ ոգու՝ յանձնել եկեղեցական ողջ գործերի կառավարութիւնը, որի մէջ և եկեղեցու շինութեան շարունակելու և աւարտելու գործը՝ ծխական հոգաբարձութեանը»։

Այդ բանաձևին դէմ եղան միայն 2 հոգի, իսկ մի հոգի էլ ձեռնպահ մնալով, բանաձևը նոյնութեամբ անցաւ ձայների ճնշող մեծամասնութեամբ։

Ժամանակը սուղ լինելով, ժողովի շարունակութիւնը յետաձգվեց մօտիկ ապագայում։

**

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

—

Նոր-Բայազէտ, 6 հոկտեմբերի

Վերջերս այստեղի գործակալի օգնականը Քիօսամամմադ գիւղացիներին մի պաշտօնական թուղթ է ուղարկում, որ իբանց գիւղում ծխական ժողով գումարեն, համախօսական կազմելով հոգաբարձուներ ընտրեն, այս տարի Կուլտուրական Մխութեան տուած նպաստակով բացվելիք ուսումարանի համար, որից յետոյ կուլտուրակի մի ուսուցիչ՝ պարապմունքները անմիջապէս սկսելու։ Բայց գիւղի իշխանները քնած չէին, որ գիւղում դպրոց բացվէր։ Սրանց տանուտէր Աւեսը իր ընկերների հետ միասին գիւղացիների մէջ քարոզում են թէ՝ «Դպրոցը մեզ համար հարկաւոր չէ, հենց մի փող կուտան, վաղը մէկի տեղը տասը կառնին ձեզնից. մեր գիւղումը մաղուլ խալիֆաներ կան, երեխէքանցը ընդունց մօտ բերէք, թօ մարդավարի ժամ ու աստուած, աղվոս, շարական սովրցուն. էլ հնչի էք խեղճ գիւղը կրակի բերանը գցում»... Այս ասում են այն աղաները, որոնց մօտ գտնվում են եկեղեցապատկան մի քանի հարիւր ռուբլիներ, քանի որ գիտեն, երբ դպրոցը բացվի, դրանց գրպաններից դուրս կը գնայ այդ փողը։

Ով քիչ թէ շատ հետաքրքրվել է մեր գաւառական կեանքով, նա անշուշտ համոզված կը լինի, որ մեր գաւառի հասարակական գործերի մեծ մասը խաղալիք են դարձել գաւառներում բուն դրած աղա-թայֆայականների ձեռքին։ Վերջինները ինչ որ ցանկանան կատարում են, որովհետև ոչ ոք չի համարձակվի նրանց դէմ ասպարեզ գալ։

Շատերին այսպէս համոզելով, շատերին էլ վախեցնելով, ամբողջ գիւղը յետ են կանգնեցնում դպրոց բաց անելու բարի մտքից։ Աղաները լսելով ցանկացողներին՝ պատասխանում են հայր գործակալին թէ՝ «Դպրոցը մեզ պէտք չէ, գիւղը չէ ուզում»։ Արդեօք կա՞ մի գործ, որը հասարակական բնոյթ ունենայ մեր դժբաղդ իրականութեան մէջ, որ սկսվի, կեանք ունենայ և առաջադիմէ, առանց այդ աղա-թայֆայականների ոտնձգութիւններին ենթարկվելու. ի հարկէ ոչ. և հենց մեր դժբաղդութիւնն էլ դրա մէջն է։

Ս. Կարապետեան

—

Շուլավէր, 20 հոկտեմբերի

Դպրոցական գործը հետևեալ պատկերն է ներկայացնում. այս 1909/10 ուսման տարեշրջանում 2 երկսեռ ծխական դպրոցները ունեն երեք I բաժ., II բ. երկու, մի՝ III IV, V և VI բ., 310 աշակերտ-աշակերտուհիներով։ Հրաւիրված են ինը ուսուցիչ-ուսուցչուհիների. դպրոցական բիւջէն կազմում է 4300 ռ., որից 1500 ռ. պէտք է վճարի հասարակութիւնը, իսկ 2800 ռ. պէտք է լրացվի թոշակավճարներից և պատահական մուտքերից, եթէ այդ էլ աջողվի։

Ի դէպ պէտք է ասել, որ աշակերտութեան ստուար մասը աղքատ ընտանիքներից են, որոնցից ոչ միայն հնարաւոր չէ թոշակավճար ստանալը, այլ միջոց պէտք է գտնել գրքերը ձրի տալու և նրանց համար հագուստ առնելու։ Ահա այս դառը կացութիւնը հոգաբարձութեանը դրել է անելանելի դրութեան մէջ, որի համար հրաւիրվում է ունևոր հայրենակիցների ուշադրութիւնը։

Դպրոցի նիւթականի սղութեան և սեփական շէնութիւն շինելու պատճառով վերև յիշածս թիւից աւել աշակերտութիւն ընդունելու հնար չեղաւ, թէև աշակերտութեան մեծ մասը մնում է դուրսը փողոցներում թափառելիս։ Այդ մեղքը ոչ թէ դպրոցի վարիչներինն է, այլ այն ցեցերինը, որոնք պատճառ դարձան պարտադիր և ձրի կրթարանները փակելու, հարիւրաւոր երեխաների փողոց նետելու և դրա հակառակ գինեսների թիւը աւելացնելու, որպէսզի այդ որջերի արբանեակների ձեռքով իրանք իրանց և գիւղացիների տունը քանդեն։ Հրաշալի կուլտուրա է, չէ՞...։

Զարմանալի է, որ ինքը Շուլաւէրը 1905 թիւից առաջին օրինակը եղաւ ամբողջ Կովկասում պարտադիր և ձրի դպրոցներ բանալու գործում, շատ գիւղերին օրինակ ծառայեց, իսկ այժմ ինքը ամենքից յետ է մնացել։

Ա. Դալլաքեանց

ԱՅՍՏԵՂ, ԵՒ ԱՅՆՏԵՂ

—

Անցեալ տարի յունիսին գնում էի կովկասեան հանքային ջրերը, բայց ոչ բժշկվելու համար, այլ հենց այնպէս՝ մի քանի օրով։ Երկաթուղում գնացքում տեսայ մի պարոնի, մօտ 30—35 տարեկան, որը աջ ոտքից սաստիկ կաղում էր։ Առանց միմեանց հետ ծանօթանալու, մենք խօսեցինք իրար հետ, և հարց ու փորձից իմացայ, որ նա ուսուցիչ է,—հայ ուսուցիչ,—որ գնում է Պեատիգօրսկ բժշկվելու և որ բժշկները որոշել են, թէ նրա հիւանդութիւնը իշխող է (մի տեսակ ջղային հիւանդութիւն) և թէ նրան անհրաժեշտ է հանքային ջրերում բժշկվել։

Պեատիգօրսկ հասնելուց երկու օր յետոյ ես կրկին պատահեցի այդ ուսուցիչ պարոնին։ Հետաքրքրվեցի նրա հիւանդութեան մասին, և նա ինձ ասաց, որ յայտնի պրոֆեսոր Զիչօտը և մի քանի այլ ոչ պակաս յայտնի պրոֆեսորներ ու բժիշկներ կօնսիլիում են նշանակել՝ վերջնական դիագնոզը (հիւանդութեան ինչ լինելը) որոշելու համար։

Դրանից յետոյ ես այլևս չը պատահեցի հիւանդ պարոնին Պեատիգօրսկում, որովհետև, ինչպէս վերևում ասացի, շատ կարճ ժամանակով էի գնացել հանքային ջրերը։

Բայց ես նրան պատահեցի նոյն տարվայ աշնանը այստեղ՝ Թիֆլիսում։

Դեռ հեռուից նկատեցի, որ նա շատ աւելի էր կաղում, քան Պեատիգօրսկ գնալուց առաջ։ Մօտեցայ և դարձեալ հետաքրքրվեցի նրա հիւանդութիւնով։

— Ոչ միայն տարբերութիւն չեմ զգում առողջական վիճակիս մէջ,—ասաց նա ինձ,—այլ և ցաւերս աւելի են սաստկացել։ Սակայն,—աւելացրեց նա, կարծես թէ ինքն իրան մխիթարելու համար,—ինձ ասացին, որ ջրերի ազդեցութիւնը երևան է գալիս մի քանի ամիս յետոյ միայն. տեսնենք, ինչ կը լինի։

— Ի՞նչ բժշկութիւն էին նշանակել ձեզ,—հետաքրքրվեցի։

— Գլխաւորապէս էլեքտրականութիւն և ցեխի վաննաներ։

— Իսկ դիագնոզը նոքա՞նը որոշեցին ինչ որ առաջ էին ձեզ ասել։

— Բոլորովին ոչ. գտան, որ հիւանդութիւնս ոչ թէ իշիաղ է, այլ ողնաշարիս ուղեղի թաղանթի բորբոքումն է։

Անծանօթ պարոնն ու ես նորից բաժանվեցինք։

Անցաւ մի ամբողջ տարի։ Մոռացել էի հիւանդ ուսուցչի մասին։ Բայց ահա, այս օրերս նրան պատահում եմ Դիլօրցօվայա փողոցի վրա։ Նա այժմ երկու փայտով է ման գալիս և հաղիւ է քայլում։

Մօտենում եմ։

— Ի՞նչպէս է ձեր առողջութիւնը, պարոն. ի՞նչպէս եղաւ ձեր հիւանդութիւնը։

— Գնացի ոտքս կտրել տուեցի,—պատասխանում է նա ինձ շատ անվրդով ձայնով։

Առաջին անգամից ոչինչ չեմ հասկանում. նայում եմ ոտներին, երկուսն էլ նոյնն են. նոյն երկարութիւնը, նոյն չափը և նոյնանման կօշիկներ։

— Ինչը և ո՞ր մասը կտրել տուիք,—հարցնում եմ շփոթված։

— Այ, այս ամբողջը,—պատասխանում է նա նոյն պաղարիւնութեամբ, ցոյց տալով ազդրից վերև։—Այս մի ոտքս արհեստական է,—բացատրում է նա։

— Բայց ինչո՞ւ համար և ո՞րտեղ կտրեցին,—հարցնում եմ աւելի ու աւելի հետաքրքրված։

— Արտասահմանում,—պատասխանում է պարոնը։—Էհ, քանի որ այդպէս հետաքրքրվում էք,—աւելացնում է նա,—լսեցէք պատմեմ։ Ամբողջ 2—3 տարի սոսկալի ցաւեր ու տանջանքներ կրեցուց, 2000 ռուբլուց աւելի ծախսեցուց յետոյ, երբ տեսայ, որ ոչ մի օգնութիւն չեմ ստանում մեր Ռուսաստանի բժիշկներից, վճռեցի վերջապէս արտասահման գնալ։ Եւ գնացի Վիեննա ու առաջին անգամ դիմեցի ջղային հիւանդութիւնների մի մասնագէտի, որովհետև մեր բոլոր բժիշկները թէ Կովկասում և թէ մեր մայրաքաղաքներում, միշտ և շարունակ ինձ պնդում էին, թէ իմ հիւանդութիւնը ջղային է։ Սակայն Վիեննայի ջղային հիւանդութիւնների մասնագէտը, հենց առաջին անգամ հիւանդութիւնս քննելով, յայտնեց, որ ես ոչ մի ջղային հիւանդութիւն չունեմ, և ինձ ուղարկեց վիրաբոյժ մասնագէտի մօտ։ Այս վերջինը, նոյնպէս, հենց առաջին անգամ քննելով, ասաց, որ իմ հիւանդութիւնը սարկոմա (բակի տեսակ մի այլ հիւանդութիւն) է, այլ ոչ թէ ջղային մի որևէ բան։ Երբ ես նրան յայտնեցի մեր՝ Ռուսաստանի յայտնի մասնագէտ պրոֆեսորների որոշած դիագնոզի մասին, նա զարմանքից ուղղակի աչքերը չտեց ու ուսերը վեր քաշեց։

— Ձեր պատուարժան բժիշկները,—ասաց նա,—գոնէ ուշադրութիւն պիտի դարձնէին այն հանգամանքի վրա, որ ձեր մի ամբողջ ոտքը ազդրից ցածր նիհարել է, իսկ ազդրը, ընդհակառակը, անհամեմատ հաստացած է։ Եթէ ջղային հիւանդութիւնից նիհարած լինէր ձեր ոտքը, այն ժամանակ համահաւասար կերպով պիտի նիհարէր և ազդրը, այն ինչ ճիշդ հակառակն է տեղի ունեցել։ Դուք ասում էք, որ ձեզ բժշկել են էլեքտրականութեամբ և ցեխի վաննաներով։ Այդպիսով նրանք ոչ թէ ձեզ բժշկել, այլ էլ աւելի են զարգացրել ձեր հիւանդութիւնը։ Ներկայումս դուք շատ վտանգաւոր դրութեան մէջ էք. ձեր հիւանդութիւնը չափազանց շատ է առաջ գնացել. ուրիշ ոչ մի բժշկութիւն այլևս ձեզ չէ կարող օգնել։ Դուք կարող էք ընդամենը երկու տարի միայն ապրել և ամենասոսկալի տանջանքների մէջ կը մեռնէք։ Եթէ հնարաւոր լինէր իսկոյն ձեր ամբողջ ոտքը կտրել, կը փրկվէիք. բայց ես չեմ վստահանում այդ էլ անել, որովհետև շատ մաշված էք և կարող էք հենց օպերացիայի սեղանի վրա մահանալ»։

Ընթերցող, մէկ բոպէ, միմիայն մէկ բոպէ դուք ձեզ երևակայէք այն հիւանդի տեղը, որը գնացել է իր իրը թէ ոչ շատ վստանալու, թէև տանջող հիւանդութիւնը բուժելու և որին յանկարծ հեղինակաւոր ձայնով այդպիսի դատավճիռ են կարդում։ «Այլևս բժշկվել դուք ոչ մի կերպ չէք կարող,—ասում են նրան.—միակ ձեր փրկութիւնը ձեր ամբողջ ոտքը կտրելն է. բայց այդ էլ յանձն չենք առնում անելու, որովհետև իսկոյն կը մեռնէք։ Գնացէք ուրեմն, ապրեցէք էլի երկու տարի տանջանքներով և մեռէք սոսկալի չարչարանքներով»։

— Ցուսահատ ես հեռացայ Վիեննայից,—շարունակեց իր պատմութիւնը հիւանդ պարոնը,—և գնացի Լօզան, յայտնի պրոֆ. Ռուի մօտ։ Սա էլ համարեա թէ նոյնը կրկնեց, ինչ որ ինձ ասել էր Վիեննայի պրոֆեսորը։ Միակ տարբերութիւնն այն էր, որ սա յայտնեց, թէ ես իսկի երկու տարի էլ չը պիտի կարողանամ ապրել, այլ հաղիւ մէկ և կէս տարի։ Բայց և միևնոյն ժամանակ Ռուն յանձն առաւ ոտքս կտրել, նախօրօք յայտարարելով թէ օպե-

բացիայի աջողութեան համար 50 տոկոս միայն կարելի է յոյս ունենալ։ Ի հարկէ, ես համաձայնեցի, և օպերացիան աջող ելք ունեցաւ։ Այս արհեստական ոտքս էլ այնտեղ շինեցին։ Այժմ բոլորովին ազատվել եմ ցաւերից ու տանջանքներից։ Խիստ կաղալս նրանից է, որ դեռ վերքի տեղը լաւ չէ ամրացել։ Իսկ երբ ամրանայ, մէկ փայտս էլ մի կողմ կը նետեմ և ման կը գամ մի փայտով։ Թէև զրկվեցի ոտքիցս ընդմիշտ, բայց գոնէ ազատվեցի տանջանքներից և մանաւանդ սոսկալի ու շուտափոյթ մահից։

— Իսկ ձեզնից որչափ վերցրեց պրոֆ. Բուն օպերացիայի համար,—հետաքրքրվեցի։

— Ոչինչ,—պատասխանեց խօսակիցս,— նա մինչև իսկ ինձ իր հիւանդանոցում չը պահեցրեց, որովհետև այնտեղ թանգ են վճարում, այլ տեղաւորեց կանտօնի հիւանդանոցում, որտեղ մօտ երկու ամիս ինձ խնամելու համար վերցրին ընդամենը 200 ֆրանկ (մօտ 40 ռուբլի)։ Իսկ եթէ ձեզ ասեմ և այն, որ Պեատիգօրսկում նոյն ժամանակի ընթացքում ապրելս ու իբր թէ բժշկելս ինձ վրա 500 ռուբլուց աւելի նստեց, այն ժամանակ ձեզ համար աւելի հասկանալի կը լինի տարբերութիւնը այստեղի և այնտեղի միջև։

Ես բաժանվեցի հիւանդ պարոնից։ Բայց նրա արած պատմութիւնը, վերջաս ճնշող տպաւորութիւն թողնելով հանդերձ, մէջս անթիւ խորհրդածութիւններ առաջացրեց։

Ինչու արդեօք այդպիսի մեծ տարբերութիւն կայ այստեղի և այնտեղի միջև։ Ինչու մեր՝ ամբողջ Ռուսաստանի թէ բժիշկները, թէ ճարտարապետները, թէ ինժեներները և թէ առհասարակ բոլոր մասնագէտներն այն աստիճան թերի, անկատար և նոյն իսկ ոգեէ են իրանց մասնագիտութիւնների մէջ։ Չէ՞ որ գիտութիւնը ոչ մի հայրենիք չունի. այն բոլորը, ինչ որ աւանդում, սովորեցնում ու սովորում են Պարիզի, Վիէննայի և այլ արտասահմանեան համալսարաններում, նոյնը սովորեցնում և սովորում են նաև Ռուսաստանի համալսարաններում։ Չը կայ ոչ մի գիտական նորութիւն, որ իսկոյնեւեթ չը հրատարակվի և ամբողջ գիտական աշխարհի սեփականութիւնը չը դառնայ։

Արդ՝ ինչու մեզանում բժիշկները ամեն քայլափոխում անհաւատալի սխալմունքների մէջ են ընկնում և, փոխանակ իրանց դիմող հիւանդներին օր առաջ օգնութիւն հասցնելու, բոլորովին ակամայից մահվան դուռն են հասցնում և մինչև իսկ այն աշխարհը ուղարկում։ Իսկ այնտեղ, արտասահմանում, այդպիսի սխալմունքները շատ հազւագիւտ դէպքեր են համարվում։

Ինչու մեր երկրում շինված երկաթուղիները, կամուրջները և այլ ճանապարհներն առանց նորոգութեան և կարկատանների 1—2 տարի էլ չեն կարողանում դիմանալ, չը նայելով որ մեր երկաթուղային գնացքները փուրգոնի արագութեամբ են շարժվում, իսկ այնտեղ, ուր մէկ ժամում 60—80 վերստ ճանապարհ են կտրում, ամեն ինչ շատ աւելի կարգին և անհամեմատ լաւ դրութեան մէջ են գտնվում։

Բանը նրանումն է, որ մենք էլ բազմաթիւ բժիշկներ ու այլ մասնագէտներ ունենք, որոնք իրանց ուսումը նոյն արտասահմանեան համալսարաններումն են ստացել և կամ այնտեղ մի քանի տարի կատարելագործվել, սակայն այդպիսիներն էլ շատ մեծ առաւելութիւն չունեն դիցուք հէնց Խարկովում աւարտածներից։

Կը նշանակէ՝ ոչ համալսարանների և ոչ էլ դասաւանդող պրոֆեսորների մէջ պիտի փնտռել այդ տարօրինակ տարբերութիւնը, այլ կայ անշուշտ մի շատ աւելի խոր և լուրջ պատճառ։

Ո՞րն է այդ էական պատճառը. ահա մի հարց, որի մասին արժէ շատ լուրջ մտածել։

Խ.-Ադամ

ՅՕԳՈՒՏ ԱԴԱՆԱՑԻՆԵՐԻ

Իբրև արձագանք Գր. Զալխուշեանի կոչին՝ որ ուղղվածէր հայ մանուկներին, ստացանք Թիֆլիսում Սիրունիկ Ա. Բալանթաղեանից—2 ր.։

Այդ կոչին իբրև արձագանք ստացած ունինք մինչև օրս 15 ր. 47 կ.։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Զինուորակոչութեան Թիֆլիսի ատեանը ընդունեց դարձեալ 80 զինուորացուներին, որով ընդամենը եղան ընդունված 186 հոգի. պակասում են միայն 29 մարդ։ Յիշեալ երիտասարդներից 35-ը ուղարկվել են զինուորական հիւանդանոց։

— Թադուհի-Կայսրուհի Մարիա Ալեքսանդրօվնայի խնամատարութեան տակ գտնվող կոյրերի հոգաբարձութեան կովկասեան բաժանմունքը մեզ խնդրում է յայտնել, որ նա ստացել է անդրկովկասեան ակցիզային կառավարչից 896 ր. 46 կ., որ հաւաքվել է ակցիզային վարչութիւնների դանձատուփերում. Թիֆլիսում 273 ր. 34 կ., Բուքայիում 166 ր. 14 կ., Բագում 67 ր. 35 կ., Սղնախում 112 ր. 42 կ., Բագում 1 ր. 22 կ., Բաթումում 60 կ., Սուխումում 72 ր. 60 կ., Շամախում 9 ր. 37 կ., Լենքորանում 20 ր. 25 կ., Ալէքսանդրօպոլում 57 ր. 90 կ., Կարսում 20 ր. 25 կ., Իգդիրում 26 ր. 10 կ., Դիլիջանում 11 ր. 70 կ., Շուշում 11 ր. 10 կ., Թելաւում 36 ր. 87 կ., Նուխում 9 ր. 24 կօպ.։ Բաժանմունքը իր շնորհակալութիւնն է յայտնում ակցիզային ծառայողներին և նուիրատուներին։

— Թիֆլիսի Հասարակական կլուբի խորհուրդը թոյլտուութիւն է ստացել վիճաբանութիւններ սահմանել շաբաթ օրերը ըէֆերատների ընթերցումից յետոյ։ Նոյն կլուբի խորհուրդը որոշել է նոյեմբերի 1-ից անդամների համար բանալ գրադարան։ Ընդունվում են նուիրատուութիւններ գրքերով։

— 1909 թ. կովկասեան գիւղատնտեսական ստատիստիկական տեղեկագիր կազմելու համար, Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութիւնը շարունակ ստանում է Անդրկովկասի զանազան տեղերից տեղեկութիւններ ցանքսերի, մրգերի և բոյսերի մասին։ Յիշեալ տեղեկութիւնները ստուգելու գործը կը սկսվի նոյեմբերից։

— «Баку» լրագրում կարդում ենք. «Հիւանդանոցի բժիշկների մասնաժողովը գտաւ, որ Ա. Ահարոնեանին, որ ներկայումս գտնվում է Միքայէլեան հիւանդանոցում, անհրաժեշտ է լուրջ անդամահատութեան ենթարկել, հեռացնելով աղիքային վէրքերը։ Բայց որովհետև նրա առողջութիւնը չի դիմանայ անդամահատութեան, այժմ, ինչպէս լսեցինք, հարց է ծագում այն մասին, որպէսզի հնարաւորութիւն տրվի Ահարոնեանին կազդուրվել հիւանդանոցային պայմաններից դուրս՝ կարելի լինի տանելու ծանր անդամահատութիւնը»։

— Ինչպէս լսել է «Баку» լրագիրը, Ա. Ահարոնեանի «Ուխտեանք» դրաման թարգմանվելու է ռուսերէն և խաղացվելու է Բագում Կաշիրինի խմբի ձեռքով։

— Թիֆլիսում ստացված տեղեկութիւնների համաձայն, երկրագործութեան դեպարտամենտը իր ծախքերի մէջ մացրել է 3000 ռուբլու չափ մի գումար, որ տրվելու է Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեանը հրատարակչական պէտքերի համար։

— Կովկաս եկող ռուս գաղթականներին Թիֆլիսի բուսաբանական այգուց տրվում են ձրիաբար զանազան սերմեր և խոտեր, համաձայն Պետերբուրգից ստացված կարգադրութեան։

— Թիֆլիսի քաղաքային վարկի ընկերութիւնը 100 ռուբլի է նուիրել Թիֆլիսի մահմէդականների բարեգործական ընկերութեանը։

— «Баку»-ի № 235-ի ներքին լուրերում տպված է. «Բագում, Բէլինսկու մեքենագործական արհեստանոցում ներկայումս կատարվում են աշխատանքներ վերջին տեսակի օդապարիկ կառուցանելու համար։ Պատրաստվում են յատուկ յարմարութիւններ, որոնց օգնութեամբ հնարողները յոյս ունեն խափանել օդապարիկի ուղղահայեաց ընկնումը նոյնիսկ մօտօրի կանգ առնելու դէպքում։ Նոյեմբերի վերջերը պատրաստ կը լինի փորձնական մոդելը, իսկ դեկտեմբերին հնարողները մտադիր են կատարել փորձի մի թռիչք։ Աշխատանքները կատարվում են երկու տեխնիկ-հնարողների հսկողութեան տակ, որոնք առայժմ իրանց ազգանունները թաքցնում են Ե. Ն. և Լ. Կ.-ի տակ»։

— «Մշակի» երէկվայ համարի (№ 234) ներքին լուրերի բաժնում Պետերսօն-Պուրիշկեվիչի դատի առիթով հաղորդված լուրի մէջ մտել է մի սխալ։ Գործը վերջնականապէս վերացված է սենատի քննութիւնից։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

— Լեհաստանում, Պետրօկովի նահանգում, կայ մի գաւառական քաղաք Չենստոխովօ անունով, որը բացի իր նշանաւոր արդիւնագործութեամբ՝ աւելի յայտնի է ամբողջ Ռուսաստանին Մայր Աստուածածնի հրաշագործ պատկերով, յարգված ոչ միայն կաթոլիկներից, այլ և ուղղափառներից (պատկերը ուղղափառ պատմական ծագում ունի)։ Պատկերը պահվում է պաուլինեան կոչված միաբանութեան Սվեատօգօրսկ վանքում, և ամեն տարի դէպի իրան է գրաւում մի քանի հարիւր հազարաւոր ուխտաւորներ։

Այժմ այդ պատկերը չարագործների զոհ է դարձել։ Մի քանի լրագիրների ասելով, գողերը վերցրել են պատկերի բոլոր զարդարանքները (մարգարիտներ, գոհարներ, ալմաղներ), ընդհանուր գումարով մօտ 5 միլիոն ռուբլու։ Իսկ «Рѣчь»-ը մի տեղացու բերանով հաւատացնում է, որ չարագործները տարել են և հրաշագործ պատկերը։ Բայց հոգևորականութիւնը չը ցանկանալով զրկվել իր անգին եկամուտներից լուրեր է տարածում, թէ միայն գողացված է պատկերի արդ ու զարդը։

Գողերը չեն գտնվել։ Մի հարուստ լեհացի ազնուական իր հաշվով Պարիզից բերել է տալիս 4 յայտնի խուզարկիչներ, որպէսզի նրանք օգնեն գողերի յայտնագործմանը։

— Մօսկվայում կայ գեղեցկութեան ու շռայլութեան մի տեղ, «Սոբելնա» ասված պանդոկը, որ յայտնի էր միաժամանակ իր ցիգանական երգեցիկ խմբով։ Մօտ օրերս այդ պանդոկը ոտնել է իր հիմնադրութեան 50-ամեակը։ Պանդոկատէրը, այդ առիթով, կազմել է իր մշտական յաճախորդների համար մի ընթրիք, որին հրաւիրված են եղել մօտ 700 հոգի՝ առևտրական, արտիստական, փաստաբանական և այլ խաւերից։ «Յօբելեանական» ընթրիքը, լրագիրների ասելով, նստել է պանդոկատէրին մօտ 15,000 ռուբլի։ լաւ յայտարար մեր հասարակական կարգերի ու բարքերի։

— Ներկայումս Մօսկվայում տեղի ունի ազնուականների նահանգական պարագլուխների հանդիպումը, որի զբաղմունքները կրում են դասային-քաղաքական բնոյթ։ Հանդիպումների նիստերը դռնփակ են։ «Միաւորված ազնուականութեան» համագումարի վճիռներն ունեն մեծ նշանակութիւն, սակայն այս անգամ եկել են միայն 13 նահանգների ներկայացուցիչներ։

— Դումայական դատաստանական յանձնաժողովը ցանկալի է համարում ազմինիստրատիվ աքսորի վերացումը։

— «Մշակի» ընթերցողներին յայտնի Թղթակից Բէլօրուսօվը թողնում է իր պաշտօնը Կ. Պոլսում։ Զենք կարող մեր ցաւը չը յայտնել այդ առիթով։ Արդարև «Рус. Вѣд.»-ի թղթակիցը մի տարվայ ընթացքում բաւական լոյս սփռեց Թիւրքական անցքերի վրա, միշտ ճնալով անկողմնապահ և զգեստավորելով լայն և մարդասէր աշխարհայեացքով։

— Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը մտադրվել է նորից իջեցնել երկաթուղային տոմսակների գները։ Մինիստրութիւնը բաւականաչափ տեղեկութիւններ է հաւաքել, որ յուլիսից յետոյ բարձրացված գները ոչ միայն չեն աւելացրել ընդհանուր հասոյթը, այլ զգալի չափով նրան պակասացրել են։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Զաքաթալա, 14 հոկտեմբերի

Ամսիս 11-ին ծխական դպրոցի զահլիճում, զեկավարութեամբ դերասան Շահէնի և բարեհաճ մասնակցութեամբ տեղիս սիրողների, խաղացին Ցագարելու «Խանում» և Փառնակէսի «Բանաստեղծը»։ Խաղը ընդհանուր առմամբ անցաւ շատ աջող։

Դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր. տոմսակները համարեա բոլորը վաճառված էին, շնորհիւ ուսուցչական կազմի մի քանի անդամների։ Ընդհանուր մուտքն էր մօտ 105 ր., որից զուտ օգուտ մնաց 85 ռուբլի։

Հանդիսականները գոհ սրտով և լաւ տպաւորութեան տակ հեռացան ներկայացումից։

Որբիկ

—

Ալէքսանդրօպոլից մեզ գրում են, որ քաղաքային ազատական դահլիճի բացման օրը, հոկտեմբերի 17-ին, տեղի է ունեցել նուագահանդէս մասնակցութեամբ դաշնակահարներ՝ Անդրօնիկօվայի, Պարինագօյի, Երգիչներ Ամիրջանի, Սարաջևի, Երգչուհի Վեսելօվզօրօվայի և մանկահասակ Ջուբեկահար Պալցեվի։ Նուագահանդէսը անցել է մեծ աջողութեամբ. բոլոր մասնակցողներն արժանացել են բուռն ծափահարութիւնների, և դահլիճը լցնող հասարակութիւնը բիսերով ստիպել է արտիստներին կատարել մի քանի կտորներ, ծրագրից դուրս։

Շնորհիւ դահլիճի ընդարձակութեան, երգիչների և առանձնապէս Բ. Ամիրջանի ուժեղ ձայնը հնչելիս է եղել շատ աջող, որը երգել է մեծ աջողութեամբ «Դէյսօնից», «Паяцы»-ից, «Князь Игорь»-ից մի քանի կտորներ։ Երգել է նոյնպէս մի քանի հայերէն երգեր։

Նուագահանդէսը կրկնվել է և կիրակի օրը առևտրական դպրոցի բարձր դասարանների աշակերտների համար։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Քաղաքակրթութեան տարերքը և հայկական առասպելներ»։ Ծխական դպրոցների Դ. բաժանմունքի պատմութեան դասագիրք. 43 նկարով և 1 քարտէզով։ Կազմեցին Կար. Միքիանեան և Ն. Թումանեան։ Թիֆլիս, 1909, գինն է 55 կ.։

I

Ամեն մի դասագիրք, ինչ ծրագրով և բովանդակութեամբ էլ կազմված լինի, պէտք է գոհացնէ երկու էական և գլխաւոր պայմաններ. առաջին պայմանն է՝ լեզուն, երկրորդը՝ նիւթի մշակումը։ Այս բանի կարևորութիւնը աւելի ևս զգալի է լինում, երբ դասագիրքը առաջարկվում է ժանաւանդ ծխ. դպրոցների համար։ Լեզուի նշանակութիւնն այնչափ կարևոր է և անհրաժեշտ, որ, եթէ մինչև իսկ որևէ դասագիրք նիւթի մշակման տեսակէտից շատ աջողված է լինում, իսկ լեզուն թէ արտաքին, թէ ներքին՝ տրամաբանական և քերականական ու այլ սխալներով կամ անաջող դարձուածքներով միանգամայն անճիշդ է և անաջող, այդ դէպքում այդ տեսակ դասագիրքը պէտք է դուրս նետել դպրոցական աշխարհից, որպէսզի սաների համար դրա լեզուն չը ծառայէ իբրև օրինակ նմանութեան։ Ցաւելով պէտք է նկատել, որ ներկայումս գրական հրապարակի վրա կարկուտի նման տեղացող հայերէն կազմված դասագրքերի մեծագոյն մասը, եթէ դեռ ի նկատի էլ չսոնենք նիւթի մշակումը, լեզուի կողմից պէտք է համարել անպայման անաջող։ Եւ առաւել ևս ցաւալին այն է, որ դասագրքերի հետ ծանօթանալիս, մարդ այն տպաւորութիւնն է ստանում, որ նրանց յօրինողներն ու կազմողները կատարելապէս անփոյթ և անտարբեր վերաբերմունք են ունեցել դէպի լեզուն, առանձին նշանակութիւն չը տալով նրան։

Ահա սոյնանման մտքեր և տպաւորութիւններ առաջացան մեր մէջ, երբ ծանօթացանք Միրիանեանի և Թումանեանի «Բաղաքակրթութեան տարերքը և հայկական առասպելներ» դասագրքին։ Վերոյշեալ դասագիրքը նիւթի մշակման տեսակէտից ունի զգալի թերութիւններ, սակայն աչք ծակող են և լեզուական թերութիւնները, դեռ մի կողմ թողնելով տպագրական և այլ վրիպակները։

Նախ և առաջ՝ ինչ միտք ունի «ծխական դպրոցների Դ. բաժանմունքի պատմութեան դասագիրքը» անուանել մեծադղորդ, խորիմաստ և մեծախոստում բառերով «Բաղաքակրթութեան տարերքը». երկրորդ՝ մինչև այդ դասագրքի երևալը, հայոց պատմութեան վերաբերեալ լոյս տեսած մի այլ դասագրքի առիթով, մամուլի մէջ նկատվեց արդէն, որ սխալ է հայոց պատմութեան նախնական կամ սկզբնական շրջանի անցքերը անուանել առասպելներ. պէտք է անուանել աւանդութիւններ, թէպէտև ուսումնական ծրագրում ևս սխալմամբ առասպել բառն է գործածված։ Դասագրքի կազմողներն այդ պէտք է ի նկատի ունենային։

Պէտք է շատ զղջալ լինել լեզուական նորմուծութիւններ մտցնելուց մանաւանդ տարրական դպրոցների համար կազմվող դասագրքերում։ Օրինակ՝ ինչ նշանակութիւն ունի բայերի «չը մեռնին, պաշտպանվին» վերջաւորութիւններով գործածումը, քանի որ մեր արևելեան գրական լեզուի մէջ հաստատվել և գործ է ածվում «չը մեռնեն, պաշտպանվեն» ձևը։ Չէ՞ որ այդ աւելի ևս շփոթեցնելու է մանկական լեզուն։ Կազմողները գործիք*) են անուանում նաև մեխը, թելը, թոնիրը, երկաթը, փայտը և այլն (էջ 9). իսկ մարդու ձեռքերը, ոտները, ատամները, եղունգները բնական գործիքներ (!?), (էջ 10)։ Մի այլ տեղ (էջ 11) գործ էին ածում «սուր բերանով քարեր»։ Քարի բերանը ո՞րն է։ Նոյն տեղում «կտրելու և ծակելու գործիքները շինում էին ոչ միայն... այլ և... ձկան ատամներից»։ Չկան ատամով մարդ ինչ կարող է կտրել ու ծակել... Պարանը կամ ծայրին օղակ ունեցող թոկը, որով կենդանիներ են որսում, անուանվում է (էջ 18) գեմ, մինչդեռ պէտք է ասել՝ գործիք։

«Թել» բառը անաջող է գործածված մի քանի տեղ, օրինակ՝ «քարէ կացին կամ մուրճ շինելիս ստիպված էին կոթը թելերով կապկպելով ամրացնել» (էջ 23)։ Խօսքը նախնական մարդու՝ քարի դարաշրջանում գործածող կացնի մասին է։ Նոյն էջի վրա խօսելով թէ սկզբում մարդիկ կրակից վախեցած «սարսափած փախչում էին» (?), ապա կրակին ընտելանալը պարզելու համար թէ ուղղակի և թէ փոխաբերական իմաստով հետևեալ սխալ պարբերութիւնն են տալիս կազմողները. «Այնուհետև երբ տեսան (?), որ կրակը իրանց վնաս չի տալիս, կամաց-կամաց (!?) սկսեցին մօտենալ նրան»։

29-րդ էջի վրա ասված է. «Դեռ մինչև կրակի գիւտը նրանք գործ էին ածում զանազան ամաններ, որոնք պատրաստ էին բնութեան մէջ։ Այսպէս նրանք գործ էին ածում դդումներ, խոշոր ընկոյզներ, կրիայի վահաններ և այլն»։

Նախևառաջ՝ բնութեան մէջ ոչ մի պատրաստ աման չը կայ, որ մարդիկ գտնեն, երկրորդ՝ դդումը, ընկոյզը, կրիայի վահանը ինքնըստինքեան դեռ ամաններ չեն. դրանց պէտք է յարմարեցնել, այսինքն նախ ազատել միջուկից, իսկ յետոյ կեղևը, կճեպը կամ պինդ մասերը դարձնել աման։

34-ը և 83-ը էջերի վրա ասված է. «Արիւն բաց թողնելու համար կտրատում էին մարմինը» (?!)։ Մարմինը որ կտրատեն, էլ ինչ կը մնայ տեղը։

Կազմողները գործ են ածում հետևեալ սխալ դարձուածքը. «Բնակարանները շինում էին ջրերի մէջ», կամ «տները շինում էին ջրերի մէջ» (էջ 37)։ Ուրեմն մարդ շինում է ջրի մէջ բնակարան կամ տուն և մէջերը, այսինքն ջրի մէջ ապրում։

Միանգամայն անաջող է հետևեալ դարձուածքը. «Մարդիկ յատակին էին նստում և պառկում» (էջ 38)։ Ուրեմն կարելի է ասել և նստել աթոռին, պառկել անկողնին։ Գաւառաբարբառների տարբերութիւնը բացատրելու համար կազմողները հետևեալ սխալ պարբերութիւնն են մէջ բերում. «որ հայ ազգի զանազան մասերը (!) փոփոխել են (?) իրանց սկզբնական մայր լեզուն». 76-դ էջի վրա ասված է. «Իսկ հին եգիպտացիները գրում էին մի տեսակ բոյսի վրա, որ կոչվում էր (իսկ այժմ չէ՞ կոչվում) պապիրուս։ Սիթէ կարելի է ասել՝ բոյսի վրա գրում էին. գրում էին ոչ թէ բոյսի վրա, այլ պապիրուս կոչվող բոյսի միջուկից պատրաստում էին թերթեր, որոնց վրա գրում էին եգիպտացիները։

Նկատենք, որ այստեղ առաջ բերված լեզուական սխալ օրինակներից մի քանիսը մասամբ և առաջացել են ուսուցման նիւթի սխալ կամ թերի ըմբռնումից։

«Աստուածներ» (էջ 76) գլխում հետևեալ անաջող դարձուածքները կան. «Վայրենի մարդիկ դժուարութեամբ էին կարողանում ապրել», կամ «քամին չեր երեւում, բայց կոտրում էր ծառերը» և վերջապէս «մութը յանախ պատում էր աշխարհը» (!?) և ապա «մարդիկ չէին կարողանում տեսնել և ազատ շարժվել»։

Եթէ խօսքը գիշերային մութի մասին է, այդ մութը ոչ թէ «յաճախ», այլ իր ժամանակին է պատում, իսկ եթէ «սև-սև» ամպերից «ցերեկը խաւարում էր», սիթէ այդ դէպքում մարդիկ չէին կարող «տեսնել և ազատ շարժվել»։

Վերջապէս այդ ինչ «մութ» է, որ պատում է «աշխարհը» (!)։

80-դ էջի վրա. «Զանազան երկիրներում զանազան կենդանիներ կային, որոնց մէջ մեծնում էին մեռածների հոգիները»։ Եթէ զանազան կենդանիներ «կային», ուրեմն այժմ նրանք չը կան։ «Մեռածները» հոգիներ չունեն, նաև տգեղ դարձուածք է ասել՝ հոգիները «մտնում էին»։

«Կուռք» և «արձան» բառերի գործածութիւնը շփոթված է. յունական աստուածների վերաբերմամբ պէտք է գործածել «արձան» բառը և ոչ թէ «կուռք» (էջ 84)։

Հետևեալ պարբերութիւնը, թէ լեզուական, թէ տրամաբանական և թէ քերականական տեսակէտից, միանգամայն սխալ է և անաջող։ «Մեհեանների հարստութեան հետ կամաց-կամաց շատացան և քուրմերը. ժամանակի ընթացքում նրանք կազմեցին (?) մի մեծ քրմական դասակարգ։ Նրանք ունէին իրանց գլխաւորը կամ քրմապետը։ Մեհեանների հարստութիւնը և քրմական բոլոր գործերը ճեռնք (?) էին կառավարում։ Շատ իշխաններ, մինչև անգամ թագաւորների որդիք աշխատում էին քրմապետ դառնալ» (էջ 88)։ Չէ կարելի ասել. «Հարստութեան հետ քուրմերը շատացան». ոչ թէ քուրմերը «կազմեցին», այլ նրանցից կազմվեց կամ առաջացաւ քրմական դասակարգ և ինչու անդամառաւ «մի մեծ». ոչ թէ «նը-բանք», այլ նա, այսինքն քրմապետն էր կառավարում քրմական բոլոր գործերը. և սխալ դարձուածք է ասել՝ «կառավարում էին մեհեանների հարստութիւնը». սա հայերէն չէ։ Աւելի ճիշդն է ասել, թէ մինչև իսկ թագաւորների որդիք ձգտում, տենչում էին քրմապետ դառնալ և ոչ թէ «աշխատում էին»։

«Գոռոզացաւ Բէլը իր ցեղի յաղթութիւններից» (էջ 91). աւելի ճիշդն է՝ «իր ցեղի կատարած յաղթութիւններից»։ Պէտք է քերականական մի ձև ընդունել և գործ ածել, և ոչ թէ միաժամանակ տարբեր ձևեր գործածել, օրինակ. «Իր ցեղի, իր իշխանութիւնը», իսկ հետևեալ տողում «իւր հրամանները» (էջ 91)։

«Հսկայ Բէլը տապալվեց գետին, իսկ ամբոխը (!?) սարսափահար սկսեց փախչել» (էջ 94)։ Այդ ինչ ամբոխ էր ներկայ՝ Հայկի և Բէլի կռիւի ժամանակ։

Միանգամայն չի սազում և անօգուտ է աշխարհաբարի մէջ գործածել «Աբրահամ ծնաւ զԻսահակ» ձևը. կազմողները շարունակ գործ են ածում. «Ամասիան ծնեց Գեղամին, Փառոխին և Ցոլակին». Գեղամը «ծնեց իր որդի (?) (ուրեմն և ուրիշի որդուն էլ կարող էր ծնել) Սիսակին» (էջ 95)։

«Արամը պատերազմեց Բարշամի հետ», (էջ 97). պէտք է լինի՝ «Բարշամի դէմ». այլապէս կարելի է հասկանալ, թէ Արամը Բարշամի հետ մի ուրիշի դէմ պատերազմեց։

«Բերած գետի մի մասը տարաւ քաղաք» (էջ 101). խօսքը սկզբում ամբարտակի մասին է, իսկ յանկարծ ամբարտակը դառնում է գետ. չէ կարելի ասել «բերած գետ», գետը բերել։ Ահա և մի օրինակ հազադէպ կուրիոզի. 102-դ երեսի վրա ասված է. «Շամիրամը Հայաստանի վերակացու նշանակեց նրա (այսինքն Արա Գեղեցիկի) 12 տարեկան որդուն...», իսկ մի տողից յետոյ՝ «Այս Արան Անուշաւան անունով մի որդի ուներ (!?!)...» (էջ 102)։ Ահա թէ լեզուին անփոյթ վերաբերմունք ունենալը ուր կը հասցնի... Տան և երկու տարեկան և մի որդի ուներ, փոխանակ ասելու գոնէ այսպէս՝ «ունեցաւ մի որդի» և այլն։ 12 տարեկանի որդի Անուշաւանն այնչափ էլ տարիքով մեծ էր, որ «խօսքի ու գործի մէջ շնորհալի էր» (էջ 102)... Բաւականանք այսքանով, ընթերցող, որովհետև դասագրքի իւրաքանչիւր էջի վրա մարգարիտների պէս շարէշար սխալների էք հանդիպում։

Սիթէ կարելի է այդ տեսակ լեզուով կազմված դասագիրքը տալ Դ. բաժանմունքի սաների ձեռքը։ Մեր կարծիքով՝ ոչ։

Ա. Նազարէթեան

(Վերջը միւս անգամ)

*) Ընդգծումները մերն են։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 22 հոկտեմբերի

Երբ լրագիրները սկսեցին գրել Ադանայի կոտորածների մասին, իմ աչքի առաջ միշտ պատկերանում էին այն սարսափները, որոնց ականատես են եղել և մորթոտվել զազանացած Թիւրքերի ձեռքով խեղճ հայ ընտանիքները։ Ես երևակայում էի այն անբաղդ փոքրիկ մանուկներին, որոնք՝ զրկված ծնողներից և հարազատներից՝ մեացին փողոցներում անտուն, անտէր, սոված, քաղցած և առանց հագուստի. ուրախանում էի, երբ գրում էիք, թէ նրանց համար փող են հաւաքում և ուղարկում, անոք են շինում և շորեր են հագցնում։

Բայց ինձ վրա մեծ ազդեցութիւն գործեց Գր. Զալխուշեանի նամակը՝ ուղղված հայ մանուկներին, որոնք իսկապէս պարտաւոր են իրանց ծնողներից խնդրած կոպէկներով օգնել Ադանայի որբ փոքրիկներին։

Ես իմ կողմից խնդրեցի և ստացայ իմ հօրեղբօրից փող, որը ուղարկելով ձեզ խնդրում եմ ընդունէք՝ ինձանից 1 ր., իմ եղբայր Իսիդից 50 կ. և իմ հօրեղբօրդից

Սանիկից 50 կ., բոլորը 2 ր., որոնք միացնելով մեր հայազգի բազմաթիւ մանուկներից ստացված կոպեկների հետ՝ շուտ հասցնէք Ադանայի որբ և քաղցած երեխաներին։ Սիրունիկ Ա. Բալանթարեան

ՀԵՐՔՈ՞ՒՄ ԹԷ՞ ԱՆՀԵԹԵԹՈՒԹԻՒՆ*)

11) Ըստ փոխադրողի գրել եմ ես. «Երբ քամի է լինում, այն ժամանակ միայն ծովի վրա առաջ են գալիս ալիքներ»։ Աբեղեան այժմ հարցնում է ինձ. «Էլ ի՞նչ, ասացէք... ծով տեսել չէ՞ք երբևիցէ»։ Ես կարող եմ յարգելի աշխարհագրագէտի այդ ցանկութեանը բաւականութիւն տալ՝ պատասխանելով. այո, պարոն, ես ապրում եմ մի ծովափնեայ քաղաքում և ամեն օր հանդիսատես եմ ծովի ալիքների առաջանալուն, նոյնիսկ այն ժամանակ, երբ եղանակը կատարեալապէս խաղաղ է և բացարձակապէս հողմազուրկ, որովհետև «ծովի ջուրը երբէք չէ լինում միանգամայն հանգիստ»։

13) Ես գրել եմ. «Աբեղեան չէ մոռանում բացատրել, թէ ի՞նչ բանէ օդը (և չակերների մէջ նրա խօսքերը առաջ էի բերել այսպէս). «Օդը մի թեթև թափանցիկ գազ է»։ Իսկ ի՞նչ բան է գազը։ «Գազ ասելով հասկանում ենք այնպիսի նիւթեր, ինչպէս և օր. օդը, գոլորշին». sic. գերազանց բացատրութիւն»։ Իմ այս նկատողութիւնը ես արել էի այն դիտաւորութեամբ, որպէսզի Աբեղեանը հասկանայ, որ մի անյայտով չի կարելի մի այլ անյայտ գտնել, եթէ երկուսն էլ մեզ համար անյայտներ են. իսկ «sic» բառն էլ գրել էի «գոլորշի» բառի կողքին, ցոյց տալու որ գոլորշին գազ չէ։ Բայց փոխադրողը, փոխանակ այս տարբերական նկատողութիւնը ըմբռնելու, ըողոքում է այն բանի դէմ, որ ես իր՝ օդի մասին տուած տեղեկութեան շարունակութիւնը առաջ չեմ բերել։ Աբեղեանի այս բողոքը իրաւացի կը լինէր, եթէ շարունակութիւնը օդի և գազի դաղափարը պարզէր։ Համաձայնեցէք, որ մի դատողութեան համար անկարելի է մի ամբողջ գիրքը արտագրել, մանաւանդ որ օդի մասին իր տուած տեղեկութիւնը ոչ մի կապ չունի արծարծած նկատողութեան հետ։

15. Աբեղեան դարձեալ ըողոքում է, որ իբր թէ ես իր նախադասութիւնը կիսատ եմ թողել առաջ բերելով իր խօսքերը այսպէս. «Երբ օդը պարզ է լինում և անամպ, արեգակի ճառագայթները լուսաւորում են օդը և մեր գլխավերևը տարածվում է կապոյտ երկնակամարը»։ Եւ ապա առաջ է բերում հետևեալ կտորը. «Օդի բազմաթիւ շերտեր իրար վրա դասվելով՝ նրան կապոյտ գոյն են տալիս»։ Բայց դրանով էլ բանը չը դրստվեց։ Եւ սակայն, չը նայած այս հանգամանքին, ընդդիմախօսս աւելացնում է։ «Այստեղ ոչ ցերեկվայ և ոչ էլ գիշերվայ մասին խօսք կայ»։

«Օդի բազմաթիւ շերտերը», լինեն նրանք հաստ թէ բարակ, խիտ կամ նոսր, առանց լոյսի անգոյն են։ Սա մի տարրական ճշմարտութիւն է։ Լոյսի՝ մեր մթնոլորտի միջով անցնելուց, նրա երկարալիք գոյնի ճառագայթները կլանվում են օդից, իսկ կարճալիք գոյնի ճառագայթները հանվում են մեր աչքին, որի համար էլ երկնակամարը մեզ կապոյտ գոյնով է երևում։ Սակայն Աբեղեանի ասած «օդի շերտերը» արեգակից չէ միայն, որ լոյս են ստանում, այլ և երկնային ուրիշ մարմիններից։ Դրա համար է, որ երկնակամարը գիշերներն էլ է կապոյտ գոյն ունենում։

16. Առաջ բերելով Աբեղեանի՝ երկրի գնդաձևութեան մասին առաջադրած փաստերը, ես գրել էի, որ վիճելի դասագրքում փոխանակ համոզեցուցիչ, գեղեցիկ և հանրածանօթ փաստերի հանդիպելու՝ «մենք պատահում ենք նրա դասագրքում, չը գտեմ ինչ աղբիւրներից վերցրած, անմիտ օրինակների, որոնք և մեզանչում էլ են գիտական ճշմարտութիւնների դէմ», ինչպէս օրինակ՝ «Հորիզոնի բոլոր կէտերը հաւասար հեռու են գտնվում, որովհետև երկիրը հաւասարապէս կորնթարթ է ամեն ուղղութեամբ», կամ թէ չէ՝ «Երկրի կորընթարթ լինելն է պատճառ, որ մենք կարողանում ենք տեսնել ցամաքի մակերևոյթի այն մասը, որ գտնվում է հորիզոնի այս կողմը»։ Ես գրել եմ, որ եթէ ենթադրեմք մի բոպէ երկիրը տափակ, այդ դէպքում հորիզոնի բոլոր կէտերը դարձեալ հաւասար հեռու կը լինէին մեզանից և հորիզոնի այս կողմը միայն կը տեսնէինք, քանի որ հորիզոնը մեր տեսողութեան սահմանն է։ Աբեղեանը, փոխանակ իմ ենթադրութիւնը հերքելու, գրում է. «Կուզէք դուք ոչ թէ մի բոպէ, այլ միշտ էլ ընդունեցէք, որ երկիրը տափակ է. ես գործ ունեմ երկրի գնդաձևութեան հետ և ըստ այնմ էլ գրել եմ իմ խօսքերը»։ Ահա ձեզ պատասխան։

Դասագիրք կազմողն առաջ է բերում փաստեր, որպէսզի աշակերտներին համոզէ, թէ երկիրը գնդաձև է։ Բայց բանից դուրս է գալիս, որ ընդդիմախօսիս հիմունքները երկրի գնդաձևութիւնն ապացուցանելու համար՝ առանձայատուկ փաստեր չեն. նրանք նոյնը կը լինէին, եթէ երկիրը և՛ այլ ձև ունենար։

*) Տես «Մշակ» № 234.

17) Քննադատութեանս մի քանի կէտերի վերաբերմամբ Աբեղեանը լռութիւն է պահպանում. այդ հանգամանքը ենթադրել է տալիս ինձ, որ ընդունում է իր սխալները։ Ապա կանգ է առնում բոյսերի աճեցողութեան պայմանների վրա և ընդունում է, որ «լաւ» բառը այդտեղ բոլորովին անտեղի կերպով է գործածել։ Իսկ ինչ վերաբերում է այն բանին, որ բոյսերի աճեցողութեան համար հարկաւոր է և հող, Աբեղեանը առարկում է, ասելով՝ «Ինքնըստինքեան հասկանալի է», և ապա շարունակում. «Բայց չէ՞ որ մի արկղի մէջ մի սենեակում ևս, որտեղ կարող է հող չը լինել, բոյսը ծլել, աճել կարող է»։ Նախ՝ եթէ հողի անհրաժեշտութիւնը «ինքնըստինքեան» հասկանալի է, էլ ինչու՞ առաջ բերել երկրորդ նախադասութիւնը. երկրորդ՝ հողի անհրաժեշտութիւնը նոյնքան է «ինքնըստինքեան» հասկանալի, որքան որ այլ պարագաների ներկայութիւնը։ Այժմ ես եմ հարցնում։ Բայց չէ՞ որ մի արկղի մէջ, մի մութ սենեակում, բոյսը կարող է ծլել, աճել։ Ովքեր որ յիշել են այդ անհրաժեշտ պարագաները, նրանք ի նկատի են ունեցել բոյսերի նորմալ աճեցողութեան պայմանները։ Ընդդիմախօսս ապա շարունակում է. «Զը լինի՞ թէ հող առելով հանքային նիւթ էք հասկանում. բայց չէ՞ որ դրանք կարող են պարունակվել նաև ջրի մէջ, օրինակ՝ ջրային բոյսերը»։ Անցողակիօրէն նկատենք, որ Աբեղեանի այս նախադասութեան մէջ «ջրային բոյսերը» հանքեր են դառել։ Բայց թողնենք այդ և ուղղենք նրա ասելիքը այսպէս. «Բայց չէ՞ որ դրանք կարող են պարունակվել նաև ջրի մէջ, որից և ջրային բոյսերը իրանց կերակուրն են վերցնում»։ Բայց ես վերոյիշեալ նախադասութիւնը գրելիս ի նկատի եմ ունեցել ընդդիմախօսիս գրուածքը, որի մէջ նա խօսում է միայն և միայն ցամաքային բոյսերի մասին, իսկ դրանց ոչ միայն անհրաժեշտ է կերակրային նիւթ, այլ և կայունութիւն...

18,19,20) Ես չեմ խօսում Աբեղեանի այս կէտերի առարկութիւնների մասին, որովհետև իւրաքանչիւր անձնաւորութեան համար իսկոյն պարզ կը լինի իմ արած նկատողութիւնների իրաւացիութիւնը, հէնց որ խնդրի առարկայ եղող գրուածքը իր ձեռքն առնի։ Աբեղեանի դասագրքում երեսին երկու նկար այնպէս են միացած միմեանց, որ անկարելի է տարբերել, թէ դրանք երկու, ուր մնաց թէ ինչ տեսակ կենդանիների նկարներ են. և ես այդ նրա՝ կատեցի միայն այն ժամանակ, երբ համեմատեցի ընագրի հետ։

21) Ես գրել եմ, որ Աբեղեանի գրուածքի մէջ հայ լեզուն կատարելապէս մարտիրոսացման է հասցված. փոխադրողը իմ այդ նկատողութիւնը «անպատասխանատու խօսքեր» է համարում. ինչու՞, որովհետև ընթերցողներին իբրև ապացոյց՝ կարճ ու կտրուկ առաջարկել էի ամբողջ դասագիրքը սկզբից մինչև վերջ։ Բայց որովհետև նա այժմ բողոքում է, ես նմուշի համար միայն կը բերեմ մի օրինակ։ Նրա գրուածքի մէջ ամեն բան շերտ է դառել. պարանոցը՝ ցամաքի շերտ է, արևադարձային գօտին և բոլոր գօտիները՝ շերտեր են, երկիրը իր բուսականութեամբ բաժանվում է շերտերի, անտառը՝ շերտ է, ծառերը դասված են շերտ-շերտ...

Այժմ դառնանք Աբեղեանի 12-րդ կէտին։ Ճիշդ է, որ նրա «վրիպակը» վրիպել է աչքիցս, թէև շեշտելու է, որ վրիպակների ցանկի գոյութիւնն էլ այնքան չի օգնի ընդդիմախօսիս՝ արդարանալու իր տիպիկ սխալների վերաբերմամբ, որոնցից, ի դէպ, աւելորդ չի լինի մի քանիսը մէջ բերել, մանաւանդ որ դրանց մասին յիշված չէ գրքի վրիպակների ցանկում։

Բաց արէք Աբեղեանի դասագրքի 92—94 երեսները։ Այս ի՞նչ կենդանու նկար է, հսկայ եղջիւրներով, նոյնքան և հսկայ մարմնով, որին փոխադրողը կusար է անուանում։ Դա իշագլուխ եղջերուն է, որին հայերէն «որմզդեղն» են անուանում։

Նոյն դասագրքի 22—23 երեսներում այն միտքն է յայտնված, թէ կաւահողի ծծողական յատկութիւնը աւելի թոյլ է, քան աւազահողինը։ Աբեղեանը չէ հասկանում, թէ ինչ բան է ծծողականութիւնը և ի՞նչ՝ թափանցկանութիւնը։ Ճահիճները և այլն առաջանում են ոչ թէ նրա համար, որ կաւահողի ծծողական յատկութիւնը թոյլ է. ոչ. կաւահողը բոլոր հողերի տեսակների մէջ ամենաբարձր ծծողական յատկութիւնն ունի. այլ որովհետև թոյլ է նրա թափանցկանութիւնը։

Քննադատած դասագրքի 35 երեսում Աբեղեանը գրում է. «Ցած ծովափերի ալիքները ջրից դուրս են բերում աւազ. այդպիսի ափերը կոչվում են տղմոտ ափեր»։ Աւազ և տիղմ՝ բոլորովին այլ բաներ են. տիղմը՝ խառնուրդ է աւազի և կաւի։ Ոչ մի դէպքում աւազից չէ կարող տիղմ առաջանալ։

Բաց արէք... Բայց այսպէս կարելի է անվերջ շարունակել...

Աբեղեանի՝ միջնորդ դատարանի դիմելուն, ես կարող եմ պատասխանել Willkommen։

Բայց մի բան ինձ տարօրինակ է թւում։ Եթէ Աբեղեանը հաւատացած է, որ ինքը հերքել է իմ նկատողութիւնները, էլ ի՞նչ միջնորդ դատարան է առաջարկում։

Ես իմ կողմից աւելորդ եմ համարում նոր դատաւորներ առաջարկելը։ Հէնց ընդդիմախօսիս ընտրած դատաւորները թող քննեն նրա դասագիրքն ու իրանց վճիռները արձակեն։ Ես համաձայն եմ։

Ա. Շիրին

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
22 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օրվայ ընթացքում խօսքերայով հիւանդացան 14, մեռան 2, հիւանդ պառկած են 25 մարդ։

ՕՍՏՐՈԳԱԾՍԿ։ Վալուէկի մօտերը անտառի մէջ գտան պայթուցիկ նիւթերի պահեստ։

ՎՕԼՕԳԴԱ։ Վախճանվեց Թօրմի Բուսի յայտնի գործիչ Տրաչ քահանան։

ԲԵՐԼԻՆ։ Պաշտօնապէս հաղորդվում է, որ բէյլիսսագը կը գումարվի նոյեմբ. 17-ին։

ՄԻՒՆԽԷՆ։ Լանդտագը ընդունվեց եկամտային հարկի օրինագիծը։

ՄԱՐՄԷԼԱՆ-ԼԷ-ԳՐԱՆ։ Օդագնաց Ֆարմանը 4 ժամ 17 բոպէ 53 վայրկեանում անցաւ 232 կիլոմետր տարածութիւն և տարաւ մրցանակը։

ՀՌՕՄ։ Երէկ եկաւ սերբական արտաքին գործերի մինիստրը և ընդունվեց Տիտտոնիից։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ազգային աշխարհագրական ընկերութիւնը Պիրիին մատուցեց ոսկէ մէդալ Հիւսիսային Բևեռին հասնելու համար։

ԼՕՆԴՕՆ։ Ֆինանսների մինիստրութեան ստատս-սեկրետարի օգնական Պիդր Բօմպըսդէդում ճառ արտասանեց, որի մէջ ասաց, որ ընդհանուր ընտրութիւնները տեղի կունենան յունվարին։ «Կառավարութիւնը,—ասաց Պիդր,—գտնում է, որ բիւջէն պէտք է հաստատվի լորդերի պալատից և թագաւորից, բայց և այնպէս համայնքների պալատը գտնում է, որ ոչ գերագոյն իշխանութիւնը, ոչ լորդերի պալատը իրաւունք ունեն մերժելու ժողովրդի ներկայացուցիչների առաջարկութիւնները»։

ՊՕՏՍԴԱՄ։ Եկաւ յունաց գահաժառանգը կնոջ և երեխաների հետ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԻԷՎԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վէլիամինսկայա փող № 8
(օ. մ.) 783. 100—38

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վենեռական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. 12½—2.
(երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 9—11.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհրութեան փ., № 33.
(ա. օ.) 1044. 100—18

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ
Կիրակի, հոկտ. 25-ին, ցերեկվայ ժամը 12-ին Թանգոյեան ս. Աստուածածնի եկեղեցում լինելու է ծիսականների առաջին ընդհանուր ժողով ընտրելու երէցփոխ և երեք հոգաբարձու նոյն եկեղեցու ծիսական դպրոցի համար, նոյնպէս և քննելու մի քանի անյետաձգելի խնդիրներ շինութեան և կրպակների վերաբերմամբ։ Յայտնելով այդ մասին՝ խնդրում եմ յիշեալ եկեղեցու չափահաս ծիսականներին շնորհ բերել եկեղեցի՝ վերոյիշեալ ժողովին մասնակցելու։
Գործակալ՝ Ղևոնդ ք. Մամիկոնեանց
(ու. շ.) 1122. 2—2

ՀՕՆՕՐԷԻ (ՏՐԻՊՊԷՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO — ՊԻՋԻԼԻՆ“
Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իրբև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իսկական մեծագոյն արկղներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։
Միաժամանակ լաւ է երգործում թէ սուր եւ թէ արատեւ բնոյթ ունեցող դեպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայատուկ ընթացքը։
ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերոգրեալ վճարումը ուղարկելով՝ հաստատագրած պաստային սակագնով։
Գտնվում է Գոլվ. Ընկ. գեղային ապրանքների վաճառանոցում։
(շ.) (П. 124817) 540. 0—5

Լոյս տեսաւ
„ՓՈԹՈՐԿԻՑ ԱՌԱՋ“
Վէպ Սրիստոս Յովհաննէսեանի
Գինն է 1 ռուբլի։
Դիմել՝ Թիֆլիս, գրավաճ. «Գուտտենբերգ»
Նոյն տեղը վաճառվում է
„ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ և ԶԵՄՍՏՎՕ“
Բէլօկօնակու, թարգ. Կ. Զալալեանի
Գինը 15 կոպէկ։
Կարելի է ուղարկել և պաստային մարկաներ։
Գրացուցակը ուղարկվում է Զ Ր Ի։
(Չ. շ.) 1111. 2—2

1843 ԲԱԶՄԱՎԷՊ 1910
Կը բովանդակէ Ազգային-Բանասիրական-Գրական-Պատմական-Կենսագրական և այլ յօդուածներ։
Իր նպատակն է բարձրացնել Հայ ժողովրդի միտքը Գեղարուեստով, Գիտութեամբ, Իւր Անցեալին և Ներկային լրջի գիտակցութեամբ։
«Բազմավէպ» իր Բանասիրական բաժնին հետ՝ պիտի զօրացնէ Գեղագիտական բաժինը՝ գեղարուեստական նկարներով և գրական ընտիր յօդուածներով. և ի հարկին իր սովորական ծաւալին վրայ պիտի աւելցնէ 16 էջ, որպէս զի կարենայ երկու շաբաթն անգամ մը հրատարակուիլ 32 էջերով։
«ԲԱԶՄԱՎԷՊԻ» ՆՈՒԻՐԸ.—Անոնք, որ 1909 Դեկտեմբեր 1/14-էն առաջ կը բաժանորդագրուին՝ յղելով միանգամայն 10 ֆր.—4 բուբլի—2 դոլլար—50 գահեկան՝ իբր նուէր պիտի ստանան 2 ֆր. արժողութեամբ գիրք մը (բաժանորդաց կը յղենք գրոց ցուցակը)։
Բարեգործական հաստատութիւնք, Ընկերակցութիւնք, գիւղերու Ուսուցիչք, Ուսանողք, Վարժարանք կրնան ամբողջ տարեկան «Բազմավէպը» ստանալ միմիայն 30 դահեկան, 2,50 բուբլի, 6 ֆր. յղելով։ Դիմել Rédaction de la Revue «Bazmavep» Venise (Italie).
Տաճկաստանի մեր գործակալութեան կեդրոնատեղին է Սեդրոս-խան թիւ 3։ Տաճկաստանի Բաժանորդները դրամը ուղղակի կրնան յղել հետևեալ հասցէին. Rév. P. J. Taïetzi (Հ. Եսայի Վ. Տայեցի) Seghpos-Han № 3. Galata, Constantinople.
ԳԵՂՈՒՆԻ՝ ի Նպաստ Կիլիկիոյ
1909-ի «Գեղունին» իր սովորական դիրքով լոյս պիտի տեսնէ դեկտեմբերի վերջերը իբր Բացառիկ թիւ մը՝ ի նպաստ Կիլիկիոյ ազէտեալներու։ Գինն է՝ 25 դահեկան, 5 ֆր., 2 բուբլի, 1 դոլար։ Անոնք՝ որոնք իրենց թղուտ հայրենակիցներուն փոքր նպաստ մը ընելու տրամադիր են՝ իրենց ստորին վրայ պիտի ունենան շքեղ «Գեղունին»։
«Գեղունին» պիտի զարդարուի ազգային և Եւրոպացի նշանաւոր գրագէտներու յօդուածներով, համաշխարհային գեղարուեստական նկարներով, ազգային և համազգային կեանքը պատմող պատկերներով։ (Շ. շ.) 1124. 2—1

ԱՌԱՋԻՆ ՀՈԼԻՈՒԴ ՕԱՍԱՐԱՆ (նախաւաղերջին)
ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ԱՌԵՒՏ. ՈՒՍՈՒՄՆ. ԱՍՏԻՃԱՆ. ԵՒ ԱՅԼ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ
բացվում է նոյեմբերի 1-ից։ Պարապմունքները ցերեկվայ ժամը 4½-ից։ Կէս տարվայ վճարը՝ 60 ռուբ. ստացվում է սկզբից։ Ծառայողները վճարում են մաս-մաս։ Վէլիկոկնեժեսկայա փ., № 17, մուտքը Միխայլովսկի պր., № 16—18, Վլօռնցովի արձանի մօտ։
(օ. մ.) 1118. 5—2



ԱՐԾԱԹԻ ԺԱՄԱՑՈՅՑ
Միայն 4 ր. 95 կ., 2 հատ՝ 9 ր. 50 կ.
Զվէյցարական մի ֆաբրիկայի լիվիդացիայի ժամանակ գնելով մեծ քանակութեամբ արծաթէ ժամացոյցներ, մենք հնարաւորութիւն ունենք միւս ֆիրմաներից կէս գնով էժան վաճ.։ Ինչու՞ փողերը կորցնել սև ժամաց. համար, քանի որ 4 ր. 95 կ. դուք կարող էք մեզ մօտ ձեռք բերել 84 յարդի արծաթէ ժամաց., որը, նոյնիսկ 10 տարի անցնելուց յետոյ, ունի իր արժէքը։ Արծաթը ընդմիշտ փող է։ Ուղարկում եմ գեղեցիկ ժամաց., շատ տոփակ, նորաձև, ոսկեգոյն քարերով, ֆնտատի մետաղէ ցիֆերբլատով, լարումը կոթից՝ 40 ժամը մի անգամ, «Ռէմօնտուար»։ Փականները միանգամայն շքեղ գրավիչներով։ Ուղղված մինչև բոպէներ, 6 տարվայ երաշխաւորութեամբ։ Վերադիր վճ. և առանց կանխավճարի։ Մինչև 4 հատի ճանապարհածախքը 40 կ. (Սիրեք 75 կ.)։ Մօտալին շղթաներ արծաթից, 84 յարդի, կլեգանտ շնուածք, հատը 2 ր. 50 կ., 3 ր. 50 կ., 5 ր.։
Հասցէն՝ Т-во „ПАТЕНТЪ“, Варшава, Св. Креста 48.
Խնդրում ենք հասցէն կարել և ամուր կպցնել ծրարի երեսին։
(В. 63718) 1020. 11—4

ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՐԷԶԻՆԻ ՄԱՆՈՒՓԱԿՏՈՒՐԱՅԻ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ТРЕУГОЛЬНИКЪ
ՖԻՐՄԱՅՈՎ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ.
ՐԷԶԻՆԻ ԵՐԿԱՐ ՓՈԿԵՐ.
ՐԷԶԻՆԻ ԵՒ ԿԱՆԵՓԻ ԹԵԻՆՈՑՆԵՐ.
ԱՍԲԷՍՏԻ ԳՈՐԾՈՒԱԾՔՆԵՐ.
ԱՍԲԷՍՏԻ ՍՏՈՒԱՐԱԹՈՒՂԹ.
ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ.
ԾԱԾԿՈՑՆԵՐ ԵՒ ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ.
ՐԷԶԻՆԱՊԱՏ ԿՏՈՐՆԵՐ.
ԵԾԱՆԻՒՆԵՐԻ ՇԻՆԵՐ ԵՒ ՊԻՏՈՅՔՆԵՐ.
ՐԷԶԻՆԻ ԽԱՂԱԼԻՔՆԵՐ.
ԽԱՂԱՂԱՆԴԱԿՆԵՐ.
ՐԷԶԻՆԻ ՄԻԱԳՈՅՆ ԿՏՈՐՆԵՐ.
ԿՐԿՆԱԿՕՇԻՆԵՐ.
ՐԷԶԻՆԻ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՊԱՐԱԳԱՆԵՐ.
ՆՈՅՆԸՆ ԵՂԶԻՒՐԱՅԻՆ ՐԷԶԻՆԻՑ.
Խնդրում ենք ուշադրութիւն դարձնել այդ կլէյմօյի վրա.

Տեղեկութիւնների և պատուէրների համար խնդրում ենք դիմել՝
Въ Тифлисское Отдѣленіе Т-ва „ТРЕУГОЛЬНИКЪ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐ. Տ. ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.
Գրէյս-կուրանները ըստ առաջին պահանջման ուղարկվում են ձ ր ի։
(շ.) 896. 0—4